Հայ գրականություն, Արձակ, Էսսե

13+

Մկրտիչ Արմեն

ԵՐԳ ԻՄ ՔԱՂԱՔԻ ՄԱՍԻՆ

1. Լուսնահաչ

Ես ծնվել և մեծացել եմ Հայաստանի մի փոքրիկ քաղաքում: Բայց այնքան շատ կան փոքրիկ քաղաքներ ամեն տեղ, ամբողջ աշխարհում, որ չգիտեմ՝ կպատկերացնի՞ ընթերցողն այն քաղաքը, որտեղ ես եմ ապրել, թե՞ կպատկերացնի իրեն ծանոթ մի այլ փոքրիկ քաղաք:

Փորձեմ նկարագրել իմ ընթերցողի առաջ: Այն չուներ գուցե ոչ մի հետաքրքիր բան, բայց ես այն ժամանակ չգիտեի դա և սիրում էի իմ փոքրիկ քաղաքը: Իսկ այժմ ես այն սիրում եմ թախծալի և ներողամիտ սիրով, ինչպես հասակ առած երեխան է սիրում հոր ձեռքով պատրաստած իր առաջին ձիուկի՝ իր աղքատիկ կյանքի այդ առաջին բերկրանքի հիշատակը: Ձիուկը խիստ հեռավոր կերպով էր նմանվում այն շքեղ ձիուկներին, որոնք թանկ գներով վաճառվում էին խանութներում, առավել ևս այն նման չէր իսկական ձիու՝ իր պայմանական աչքերով, կարճլիկ պոչով. . .

Բայց չէ՞ որ, երբ նա դեռ երեխա էր, չգիտեր այդ ամենը: Տխուր հիասթափությունը եկավ հետո միայն: Իսկ այն ժամանակ դա իսկական նժույգ էր, հեքիաթական Պեգաս: Իր մանկական մաքուր և շողշողուն երևակայությամբ նա չէր տեսնում աղքատությունը:

Այդպես էր և իմ քաղաքը: Այն քարաշեն էր և միհարկանի՝ հողե տափակ կտուրներով, բայց փառահեղ երևալու պարզամիտ հավակնությամբ, բարեկարգ ձևանալու ամաչկոտ ցանկությամբ, աշխարհի մեծ քաղաքներին նմանվելու իր ուժից վեր ճիգերով. . .

Փողոցները՝ թե երկայնակի և թե լայնակի, ձգվում էին ուղիղ և բավական լայն: Իսկ տների միհարկանի լինելուց դրանք թվում էին ավելի լայն: Դա նրանց տալիս էր դատարկ տեսք, մանավանդ որ անցորդներ քիչ կային փողոցներում:

Փողոցներում քիչ կային նաև խանութներ, ամեն տեղ տներ էին: Փոքրիկ շուկան գտնվում էր քաղաքի կենտրոնում՝ խանութների շարքերով շրջապատված: Հենց այդ մասումն էլ գտնվում էին սակավաթիվ հիմնարկները, մի քանի ճաշարանները, կինոն, թատրոնը. ես չգիտեմ, թե էլ ի՞նչ թվարկեմ. . .

Երկհարկանի մի քանի շենքերը, քաղաքի զանազան մասերում կանգնած, թվում էին հսկայական: Իսկ բավական մեծ թվով եկեղեցիներն արդեն, որ փառահեղ էին, երկրի հին ճարտարապետության ոճով կառուցված, թվում էին իսկական վիթխարիներ: Բայց մենք չէինք սիրում դրանք. կանգնած էին դրանք կարծես նրա համար, որ ավելի ևս հուպ տային գետնին մեր միհարկանի քաղաքը:

Երեկոներին քաղաքը պարուրվում էր մթության մեջ: Քառասուն ձիու ուժ ունեցող փոքրիկ էլեկտրակայանը սնում էր խիստ փոքր քանակությամբ փողոցային լապտերներ և այն էլ՝ կենտրոնական մի քանի փողոցներում և կայարանում: Էներգիայի մեծ մասը ծախսվում էր տեղական փոքրիկ լրագրի տպագրության և էլի ինչ-որ բաների վրա: Ասենք, հարկավոր էլ չէր լույսը փողոցներին. բնակիչները վաղ երեկոյից փակվում էին իրենց տներում և քնում:

Վաղ երեկոյից քնած մարդը կեսգիշերին կարթնանա անպայման: Նրան կթվա, թե շուտով լուսանալու է: Բայց որքան մեծ կլինի հիասթափությունը, երբ նա իսկույն հասկանա, ըստ մի քանի նշանների, որ գիշերվա կեսը դեռ առջևումն է.

Մոտենում ես լուսամուտին, բացում ես օդանցքը, ականջ ես դնում: Ինչի՞ն: Ինչի՞ ես սպասում: Գուցե հրաշքի՞...

Լռություն: Քաղաքը քնած է: Քաղաքի վրա՝ տափակ կտուրների և փողոցների, լուսնի անշարժ և սառը լույսն է: Եվ դու, իրոք որ, սրսփում ես այդ լույսից, ինչպես ցրտից:

Ոչ այնքան աչքիդ, որքան որ մտքիդ առջև, փռված է քո փոքրիկ քաղաքը՝ ինչպես լավայի տակից պեղված, հնադարյան, մեռյալ քաղաք. . . Կամ թե չէ նա նման է աստղադիտակով դիտված լուսնային պեյզաժի՝ անօդ և հստակ, սառը և ամայի. . .

Լուսինը չի երևում: Շունը ևս չի երևում: Բայց նստել է այդ շունը մոտիկ կամ հեռու ինչ-որ տեղում, բարձրացրել է դունչը, նայում է լուսնին, նայում և հաչում է նրա վրա. . .

Ինչո՞ւ է նա հաչում լուսնի վրա. . . Ոչ միայն ես, նույնիսկ գիտությունն ինքը դեռ չի բացատրել այդ տարօրինակ երևույթը: Բայց ահա չի քնում շունը, նայում է լուսնին և հաչում: Նրա աչքերում լուսնի մեռած լույսն է, և նրա աչքերը թվում են կույր: Իսկ նրա հաչոցը հատուկ ձևի է, դա նույնիսկ անուն ունի՝ «լուսնահաչ»: Ի՜նչ հստակ և մենավոր է հնչում դա գիշերային լռության մեջ: Ընդհատ-ընդհատ և միակերպ, նա առաջացնում է անտանելի թախիծ:

Իսկ ինչո՞ւ, ինչո՞ւ է հաչում շունը լուսնի վրա: Մարդու լավագույն այդ բարեկամը երևի վախենում է տիեզերքից, վախենում է լուսնից, վախենում է, թե հանկարծ չգահավիժի լուսինը մեր քնած քաղաքի վրա: Նա իր հաչոցով երևի ուզում է պահել լուսինն իր տեղում. . .

Նայում եմ ես և հանկարծ թվում է, թե տեսնում եմ իմ աչքի առջև երկրագունդը՝ փոքրիկ, մութ, տիեզերքի մեջ կորած: Երկրագնդի մակերեսի միայն մի մասն է լուսավորվել լուսնի կողքանց ընկած լույսով: Եվ այդ լույսի տակ, տիեզերքին դեմառդեմ, փռված է իմ քաղաքը՝ միայնակ, քնած, գուցե և մեռած: Եվ միայն մեր հավատարիմ բարեկամ շունն է, որ հաչում է այնտեղից կոսմոսի վրա, հաչում է, հաչում. . .

Ես սարսափում եմ, կոսմոսն ինձ վրա է խոյանում իր ամայությամբ, խավարով ու ցրտով: Ես արագ փակում եմ օդանցքը, նետվում եմ ետ՝ անկողին: Լույս տվեք, տաքություն տվեք ինձ և քաղաքին: Եվ տվեք մարդի՛կ, որ արթուն լինեն, աղմկեն, խլացնեն շան լուսնահաչը. . .

Իմ հոգում ծնունդ են առնում երազներ և ցնորքներ՝ մեկը մյուսից գեղեցիկ, բայց բոլորն հեղհեղուկ, անորոշ: Իմ աչքերի առաջ տարածվում է ինչ-որ անապ բան, որտեղ կա շատ և շատ ջերմ լույս, կան միլիոնավոր մարդիկ. . . Ի՞նչ է դա: Ես չգիտեմ, որովհետև դեռ երբեք չեմ տեսել այն, չեմ կարդացել դրա մասին և իմ երևակայությունը ոչնչից չի կարող մարմնավորել իմ երազը:

2. Վերհառն

Ինչպիսի՞ մեծ հայտնություն էր ինձ համար Էմիլ Վերհառնը:

Ես դաստիարակվել էի հայկական և ռուսական մեծ գրականությամբ, գիտեի նաև արտասահմանյան գրականության կլասիկներին և առաջավոր գրողներին: Բայց Վերհառնի մասին դեռ չգիտեի:

Բելգիացի հանճարեղ բանաստեղծն իր հիանալի բանաստեղծությունների մեջ նկարագրում էր «հրեշ-քաղաքները», որոնք «խելագարեցնում էին դաշտերը»: Նա ցույց էր տալիս քաղաքի գրոհը գյուղի վրա և նահապետական կյանքի քայքայումը:

Շատ բան այդ պրոցեսից նա չէր հասկանում և, մասնավորապես, չէր հասկանում դրա բուն պատճառը: Բայց նույնիսկ այնքանը, որքանը նա տեսնում էր և հասկանում, տրամադրում էր նրա պոեզիան այդ պրոցեսին ընդդեմ:

Բայց դա կազմում էր նրա պոեզիայի մի կողմը միայն: Մյուս կողմից, իսկ դա ամենագլխավորն էր, հրեշ-քաղաքների զարգացման ու տիրապետության մեջ նա տեսնում էր մարդու գրոհը բնության վրա, քաղաքակրթության փառավոր առաջընթացը: Դա տրամադրում էր նրա պոեզիան հօգուտ այդ պրոցեսի:

Հիանալի բելգիացու սքանչելի պոեզիան տապլտկվում էր հակասության մեջ: Մինչև իր կյանքի վերջը Վերհառնը չկարողացավ ազատագրվել իր երկյակ վերաբերմունքից դեպի իր պոեզիայի հիմնական, ավելի ճիշտ՝ միակ օբյեկտը՝ քաղաքը:

Նա չէր էլ կարող անել այդ բանը: Մենք՝ խորհրդային մարդիկս, որ Վերհառնից շատ ավելի լավ ենք հասկանում մարդկային հասարակության զարգացման պատմական պրոցեսը, նույնպես երկյակ վերաբերմունք ունենք դեպի այդ պրոցեսի նախորդ աստիճանները: Մենք անիծում ենք ստրկատիրական հասարակարգի ստրկատիրությունը, ֆեոդալիզմի ճորտատիրությունը, կապիտալիզմի բռնակալությունը, բայց և գիտակցում ենք, որ այդ ֆորմացիաներից յուրաքանչյուրը մի քայլ առաջ է վարել արտադրական ուժերը, էկոնոմիկան, մարդու հաղթանակը բնության վրա: Եվ մենք գիտենք, որ ավարտելով իր գործը, այդ ֆորմացիաներից յուրաքանչյուրը կարծրացել է ժամանակի ընթացքում և փոխանակ ավելի զարգացնելու արտադրական ուժերը, կասեցրել է դրանք: Ահա այդ ժամանակ էլ հասարակության աճող նոր ուժը պայթեցրել է այն և դրա փոխարեն կառուցել նոր ֆորմացիա:

Վերհառնի մեղքն այն չէր, որ նա երկյակ վերաբերմունք ուներ կապիտալիստական քաղաքի նկատմամբ, այլ այն, որ նա լրիվ պարզությամբ չէր պատկերացնում այնտեղ կատարվող պրոցեսները:

Ես՝ կոմերիտականս, այդ հասկանում էի: Աշխարհի ճանաչողության տեսակետից Վերհառնի պոեզիան չէր տալիս ինձ համարյա ոչ մի նոր բան, գուցե միայն պատկերավորում էր իմ գիտեցածները: Բայց դրա փոխարեն մեծ քաղաքի ինչպիսի՜ պատկեր էր գծագրում նա իմ աչքերի առջև:

Ոչ մի մարդ Վերհառնից առաջ, ինչպես և հետո, այդպես չի երգել մեծ քաղաքը: Իր բանաստեղծությունները նա անվանում էր պոեմներ: Եվ իրոք, նույնիսկ այն դեպքերում, երբ դրանք ընդամենը տասնվեց տող են, ընթերցողի աչքի առջև տարածվում է հսկայական, անափ քաղաքն իր բազմաթիվ փողոցներով ու հրապարակներով, գործարաններով ու ֆաբրիկաներով, կայարաններով ու նավահանգիստներով, որտեղից անդադար հեռավոր ուղևորության էին ելնում՝ գնացքներն ու շոգենավերը: Դու տեսնում ես միլիոնավոր կրակներ փողոցներում և հրապարակներում, ափեզրի և բարձր շենքերի վրա. . . Ինչպես հսկայական կենդանի օրգանիզմ, շնչում ու շարժվում է քաղաքն աչքիդ առջև իր հազարավոր շարժումներով, ամեն ուղղությամբ կատարվող շարժումներով, մարդկանց ու կառքերի, մեքենաների ու մեխանիզմների, ծխի ու գետի շարժումներով. . . Դու լսում ես քաղաքի աղմուկն ու թնդյունը, իսկ այդ լայնարձակ ու փառահեղ սիմֆոնիայի ֆոնի վրա՝ առանձին և բազմաթիվ հնչյուններ. շոգեմեքենաների և գործարանների շչակները, սլացող հրշեջ կառքերի զանգահարությունը, ռեստորանների, գարեջրատների և կաբակների երաժշտությունը, մուրճերի զնգոցը զնդանների վրա. . . Եվ այդ ամենը՝ հոգնակի թվով: Վերհառնը հոգնակի թվերի երգիչ էր:

Վերհառնին ես գտա պատահական և անսպասելի, դա ինձ համար եղավ մեծ հայտնագործություն: Ես հասկացա, որ արթնանալով կեսգիշերներին և ունկնդրելով շան լուսնահաչը գիշերային լռության մեջ, ես երազում էի մեծ քաղաքների աղմուկի մասին: Բաց օդանցքի մոտ դիտելով իմ միհարկանի փոքրիկ քաղաքը լուսնի սառը լույսի տակ, ես երազում էի մեծ քաղաքների անթիվ կրակների մասին: Լարված ուշադրությամբ լսելով քաղաքի քառասուն ձիու ուժանոց էլեկտրակայանի արտաբերիչ խողովակի ընդհատ կափկափոցը, երկաթուղու մեր կայարանով անցնող գիշերային միակ գնացքի հեռավոր շաչոցը, ես երազում էի մեծ քաղաքների մասին՝ ամեն և ամեն ինչի հոգնակի թվերով մեկտեղ. . .

Էլ ո՞վ դառնար քաղաքապաշտ իր ամբողջ կյանքում, եթե ոչ ես՝ փոքրիկ և անհյուրընկալ քաղաքի բնակիչ. . . Մեծ քաղաքը եղել և մնում է իմ սիրելին: Աշխատել և հանգստանալ ես կարող եմ միայն մեծ քաղաքում, որտեղ ամեն ինչ իմ շրջապատում սարքված է մարդկային ձեռքերով, որտեղ նույնիսկ բնությունը նախնական չէ, այլ վերստեղծված է մարդկանց ձեռքով՝ որպես զբոսայգիներ ու ծաղկանոցներ, ջրանցքներ ու լճակներ, և որտեղ ամեն տեղ կան մարդիկ, մարդիկ, մարդիկ. . .

Եթե ես Վերհառնին հայտնագործեի մինչ հեղափոխությունը, դա ինձ համար՝ փոքր քաղաքի բնակչիս, կլիներ իսկական ողբերգություն: Ես կդադարեի սիրել իմ սակավաուժ, հետադիմող փոքրիկ քաղաքը. . .

Բայց ուրիշ ժամանակներ էին դրանք: Արդեն երկու տարի էր, ինչ Հայաստանում հաստատվել էր խորհրդային իշխանություն: Մեր քաղաքը վերականգնվում էր և կառուցվում: Նրա յուրաքանչյուր շարվող քարի մեջ ես տեսնում էի իմ փոքրիկ քաղաքի վերածվելը մեծ քաղաքի: Ես սիրում էի իմ քաղաքը, որ փոքր էր, բայց կառուցվող, միհարկանի էր, բայց բարձրացող: Նա չէր հետադիմում, նա նույնիսկ կանգնած չէր իր տեղում, նա քայլում էր առաջ: Չէ՞ որ նա խորհրդային էր: Եվ նա պատրաստվում էր դառնալ ոչ թե դաշտերը խելագարեցնող հրեշ-քաղաք, այլ վերածվել խորհրդային մեծ քաղաքի:

3. Ձիուկը

Ես չեմ կարող հիշել իմ փոքրիկ քաղաքն առանց Գոհարիկի՝ իմ երիտասարդ տարիների առաջին ընկերուհու: Նրան իրեն ես չեմ հիշում, դա նույնիսկ տարօրինակ է: Ինչպիսի՞ն էր նա, գե՞ր, թե՞ նիհար, շագանակագո՞ւյն մազերով, թե՞ սև: Չեմ հիշում, չեմ հիշում: Նրա ոչ մի դիմագիծ, աչքերի ոչ մի հայացք չի տպավորվել իմ հիշողության մեջ: Դա երևի նրա համար, որ ես սիրում էի ոչ թե նրան իրեն, այլ նրա ներկայությունն իմ կողքին. . .

Բայց ի՜նչ լավ եմ հիշում նրա ներկայությունն իմ կողքին: Բավական է, որ մտաբերեմ իմ անցյալի այդ օրերը, և նա արդեն ինձ մոտ է, ես լսում եմ նրա շնչառությունը, նրա ուսի հպումն իմ ուսին և նրա հիացական, զսպված բացականչությունը՝ «նայի՛ր, նայի՛ր»:

Եվ ես նայում էի այն կողմ, ուր ցույց էր տալիս նա, նայում էի մեր փոքրիկ քաղաքին. . .

Ինձ նման նա էլ էր սիրահարված մեր քաղաքի վրա: Եվ մենք մտերմացել էինք միմյանց հետ հենց նրա համար, որ միասին հիանանք մեր ընդհանուր սիրեցյալով: Ախր ովքե՞ր էինք մենք: Մենք զավակներ էինք այն խորտակվող ժողովրդի, որին փրկեց խորհրդային իշխանությունը: Ի՞նչ էինք տեսել մենք նրա գալուց առաջ: Մենք չէինք տեսել ոչ մի գեղեցիկ բան՝ ո՛չ արև, ո՛չ գարուն, ո՛չ բնություն, ո՛չ քաղաք. . . Մենք տեսել էինք միայն անձրև ու ձյուն, քաղց ու տիֆ, սպանություններ և ավերումներ. . . Չկա ավելի ծանր ցավ, քան երբ անիծում ես քո մանկությունը: Իսկ մենք անիծում էինք. . .

Եվ հանկարծ ամեն ինչ փոխվեց: Պարզվեց, որ արևը ոչ միայն մեր սառած ոսկորները տաքացնելու համար է, այլև գեղեցիկ է, հմայիչ: Իսկ գարունը ոչ միայն խոտ է աճեցնում սոված երեխաների համար, այլև սքանչելի է:

Մենք զարմանում էինք, որ փողոցներն այժմ հայտնաբերել էին ոչ թե ավերվելու, այլև կառուցվելու ընդունակություն: Տներում այժմ թաքնված էր ոչ թե տիֆը, այլ կյանքը: Պարզվեց, որ մարդկանց աչքերում, որտեղ, ըստ մեր հասկացողությունների, չպետք է լիներ արցունքից բացի ոչինչ, կային վեսություն և ծիծաղ: Իսկ նավթի լապտերներում փոշու փոխարեն հայտնվեց նավթը: Եվ դրանք նույնպես զվարթ ծիծաղեցին իրենց լույսի կետերով՝ լուսավորելով փողոցները:

Այդ բոլորն այնքան անհավատալի էր և հեքիաթային, որ մենք միանգամից և անվերապահորեն սիրահարվեցինք դրա վրա: Մենք սիրեցինք մեր վերածնվող քաղաքը: Եվ քանի որ բոլոր մեծ զգացմունքները կարիք ունեն արտահայտվելու, մի ուրիշ մարդու հաղորդվելու, ուստի ես և Գոհարիկը մտերմացանք՝ միասին գովերգելու մեր ընդհանուր սերը: Ես համոզված եմ, որ նա և՛ս հիմա հիշում է ոչ թե ինձ, այլ իմ ներկայությունն իր կողքին՝ արդեն հեռավոր այն օրերին. . .

***

Ես հիշում եմ իմ ու Գոհարիկի սիրո երազկոտ երեկոները: Սկսվում էր այն բանից, որ իրիկնամուտի լույսն ու իրիկնամուտի մութը խառնվում էին իրար: Իմ աչքերը շաղվում էին այդ խառնուրդից, որ նման էր քաղաքի վրա իջած նոսր մառախուղի: Դրա միջով, ինչպես կիսաիրականության միջով, անցնում էին մարդիկ. արհեստավորներ՝ գոգնոցների ծայրերն ափի մեջ հավաքած և գոգնոցներում պարեն պահած, բանվորներ՝ յուղոտ, բայց իրիկնադեմի այդ ժամին այլևս չփայլող հագուստներով, իմ հասակակիցները՝ գրքերը թևերի տակ… Նրանք բոլորը գնում էին տուն: Նրանց հանդիպում էին արդեն զբոսանքի ելածները՝ կինո, թատրոն կամ այլուր

գնացողները: Նրանք քայլում էին անշտապ, որովհետև մինչև իսկական երեկոն դեռ շատ ժամանակ կար: Դեռ նույնիսկ փողոցների նավթե լապտերները վառված չէին:

Ես, նստած մեր փողոցում, դարպասի մոտ, տնից դուրս բերած աթոռի վրա, գիրք էի կարդում՝ չնկատելով, որ շուրջն արդեն կիսախավար է: Անցորդները երևի զարմանում էին, թե ես այդ ինչպե՞ս եմ ջոկում գրքի տառերը: Սակայն այդ անհնար է միայն նոր կարդալիս, իսկ նա, ով սկսում է դեռ լույս ժամանակ, կարող է շարունակել մինչև աստղերի դուրս գալը:

Ես չէի տեսնում անցուդարձող մարդկանց: Գրքով տարված, ես միայն լսում էի նրանց փափուկ ոտնաձայնները մայթերի վրա, նաև նկատում էի նրանց հազիվ նկատելի ստվերները՝ գրքի էջերով սահելիս:

Բայց հանկարծ, կարծես ինքն իրեն, «բո՛ւֆ» անելով, փակվում էր հաստափոր գիրքը և ձեռքերիս միջից անհետանում:

Ես նայում էի վերև: Իմ առջև կանգնած էր լինում Գոհարիկը:

— Չի կարելի կարդալ մթության մեջ,— հանդիմանում էր նա ինձ հանգիստ ձայնով:— Կփչացնես.. . գիրքը:

Մի քիչ վիրավորված, ես վերցնում էի աթոռը, մենք մտնում էինք բակ և լուռ քայլում դեպի մեր բնակարանի դուռը: Բայց, մտնելով տուն, մենք անմիջապես մոռանում էինք գիրքը: Գոհարիկը զվարթ մոտենում էր իմ տատին, գլխաշորի ծայրը ետ էր տանում նրա ականջի վրայից և մի քիչ բարձրացրած ձայնով ասում էր.

— Բարև, տատ:

Պառավը ժպտում էր և պատասխանելու փոխարեն շոյում էր նրա մազերը:

— Էլի եկել եմ թոռանդ տանեմ:

— Տար, օրենքն էդպես է,— զվարթ համաձայնում էր պառավը:

Եվ մենք ծիծաղում էինք:

Ես արդեն հագնված-պատրաստ, սպասողական կանգնում էի դռան մոտ, բայց Գոհարիկը պառավի հետ խոսակցությամբ տարված, կարծես չէր նկատում ինձ: Վերջապես, մենք դուրս էինք ելնում, թևանցուկ էինք անում միմյանց և թեքվում դեպի կայարան տանող փողոցներից մեկը:

***

Քայլելով փողոցով դեպի կայարան, մենք լուռ և կենտրոնացած նայում էինք դեպի փողոցի խորքը, որն աղջամուղջի մեջ կորցրել էր իր մանրամասնությունները: Տների երկու շարքերը ձգվում էին ուղիղ՝ մի քանի տեղերում ելնելով և իջնելով:

Անկյուններում կանգ առնելով, մենք նայում էինք դեպի հատող փողոցները: Եթե մենք ցածրումն էինք լինում, ապա հատող փողոցը ձգվում էր ձորակով. երկու կողմերին՝ տներ, իսկ մեջտեղում՝ առվակը: Մենք կանգնած էինք լինում կամրջակի վրա: Նույնպիսի կամրջակներ՝ քարաշեն, կամարաձև, մենք տեսնում էինք հեռվում՝ զուգահեռ մյուս փողոցների վրա:

Իսկ երբ մենք գտնվում էինք բարձրում, ապա հատող փողոցը ձգվում էր հարթության վրա և իր երկու ծայրերով դուրս էր գալիս դաշտ, ուղղակի դեպի արտերը:

Մենք շարունակում էինք քայլել, և մեր մոտենալու համեմատ տները դուրս էին լողում մթությունից և վերստանում իրենց կորցրած մանրամասնությունները: Հավասարվելով մեզ, դրանք արդեն կանգնած էին լինում անվթար՝ մթությանը վարժված մեր աչքերի առջև գծագրելով իրենց յուրաքանչյուր դետալը՝ սևաքար պատերի կարմրաքար զարդաքանդակները. սև քարերի սահմանները երիզող սպիտակ գծերի ցանցը, դարպասի կամարը՝ գետնից մինչև գետին երկգույն քարերից մեջընդմեջ շարված բնակարանների երկփեղկանի նեղ դռները՝ դարպասների կողքերին, կամարակապ լուսամուտները.. .

Լուսամուտների շրջանակները բացվում են դեպի ներս, որովհետև դրսի կողմից լուսամուտն ունի երկաթավանդակներ: Վանդակների ետևում երևում է սենյակի տեսարանը՝ տասնհինգ փոքրիկ քառակուսիների բաժանված:

Ինչպես փողոցներում, նույնպես և բնակարաններում, լույսերը դեռ վառված չեն: Սենյակների մթության ֆոնի վրա, լուսամուտների վանդակների ետևում, երևում են ծաղիկներ՝ լուսամուտագոգերում թաղարներով դրված: Դեպի փողոց են նայում աղջիկներ, երեխաներ.. . Աղջամուղջի մեջ մշուշվել են կապույտ բաժակաթերթեր, սև աչքեր, կարմիր շրթունքներ, կանաչ տերևներ, շագանակագույն գանգուրներ: Ամեն ինչ կարծես համրացել է՝ սպասելով, թե ահա փողոցում կատարվելու է ինչ-որ սքանչելի բան: Բայց առանց այդ էլ շուրջն այնքան լավ է, այնքան գեղեցիկ:

Ահա և իսկական երեկոն: Փողոց են դուրս գալիս տների տերերը՝ աթոռները կամ աթոռակները ձեռքերին: Կինը բռնում է աթոռը, իսկ ամուսինը բարձրանում է դրա վրա և վառում է լապտերը: Դռան վերևում, պատին խփված քառակողմ ֆանարների մեջ, սկսում են պլպլալ հինգ կամ ութ գծանոց նավթի լամպերը: Փողոցը զվարթանում է դրանց փոքրիկ կրակներից:

Տեղ-տեղ, փողոցների անկյուններում, կան խանութներ՝ մեկ, երկու կամ երեք ցուցափեղկանոց, երբեմն և ավելի: Այնտեղ արդեն վառվում են գազի լապտերները, կան նույնիսկ էլեկտրական լապտերներ: Դրանք շքեղորեն լուսավորում են խանութների բազմամարդությունը: Դեպի փողոց հորդած լույսն ընկել է մայթի, սալահատակի և դիմացի պատի վրա մի քանի լայն շերտերով՝ նայած ցուցափեղկերի քանակին:

Խանութներ հանդիպում են ոչ անկյուններում, այլ տների շարքերի մեջտեղում: Բայց դրանք բոլորը մի ցուցափեղկավոր են և վաղ երեկոյից արդեն փակված: Դրանք կոշկակարի կամ դերձակի արհեստանոցներ են, լավաշի փոքրիկ փուռ կամ մանրավաճառի կրպակ:

Փակ են նաև բոլոր լուսամուտների արտաքին փեղկերը. բնակարանների լույսը չի թափանցում փողոց: Բայց մենք, թող ներվի դա մեզ, հնարավորություն ենք գտնում տեսնելու սենյակների ներսի տեսարանները լուսամուտափեղկերի ճեղքերից, եթե, իհարկե, լուսամուտները ծածկված չեն նաև վարագույրներով:

Եվ մեր առջև բացվում է մի զարմանալի կյանք, որի մեջ ոչինչ չկա գաղտնի կամ վատ, բայց որն ընդունված է թաքցնել կողմնակի աչքերից:

Մենք տեսնում ենք իրիկնաթեյի նստած ընտանիքներ: Մարդիկ թեյի ափսեն բռնել են չռված մատների վրա և թեյը խմում են ֆռթոցով: Ֆռթոցը չի լսվում, բայց մենք լսում ենք:

Մենք տեսնում ենք մեր հասակակիցներին՝ գրքերի կամ տետրակների վրա գլուխները խոնարհած: Նրանց միջև մենք երբեմն ճանաչում ենք մեր ընկերներին:

Մենք տեսնում ենք տատերի ու պապերի, որոնք բան են պատմում ուշադրությամբ լսող իրենց թոռներին: Տեսնում ենք նաև թոռների, որոնք բան են պատմում ավելի ևս ուշադիր լսող իրենց տատերին ու պապերին:

Մենք տեսնում ենք կանանց՝ կարի կամ ձեռագործի նստած: Բայց, չգիտես ինչու, նրանք նստել են անգործ, նայում են ինչ-որ կողմ և ժպտում են: Փոխելով մեր տեղը և նայելով մի այլ ճեղքից, մենք հասկանում ենք. կինն ունկնդրում է այցելության եկած իր ընկերուհուն:

Մենք տեսնում ենք ծխախոտի սպիտակ մառախուղ և դրա մեջ մարդկանց անորոշ գծագրություններ՝ կախովի մեծ լամպի լույսի տակ: Ժողո՞վ է: Բայց ոչ, ահա ճոխ սարքած սեղանը.. .

Մենք տեսնում ենք իրենց անկողիններում հանգիստ քնած երեխաների:

Մենք տեսնում ենք բեղավոր տղամարդկանց, որոնք ոլորելով իրենց խիզախ բեղը, համբուրում են կանանց և հորանջում:

Մենք տեսնում ենք այդ բոլորը: Մենք վաղուց ենք մոռացել փողոցը, կարծես լուսամուտափեղկերի ճեղքերից ներս ենք մտել բնակարանները և գտնվում ենք այնտեղ, որտեղ լույս է և խնդություն, հանգիստ և երջանկություն: Բայց ուրիշի համբույրը տեսնելով, մենք շփոթված ծիծաղով ետ ենք

ցատկում լուսամուտից և իսկույն հայտնվում ենք փողոցում: Կարծես մեզ դուրս շպրտեցին բնակարաններից՝ պատվիրելով այլևս չնայել ուրիշի անձնական երջանկությանը:

Մենք շարունակում ենք մեր ճանապարհը դեպի կայարան:

Ամբողջ ճանապարհին մենք ոչինչ չենք ասում իրար, բոլորովին ոչինչ: Մեր քաղաքը մենք գովերգում ենք լռությամբ և հասկանում ենք մեր այդ ընդհանուր լեզուն:

Եվ այն էլ ինչպե՞ս ենք հասկանում:

***

Գալով կայարան, մենք շտապում ենք մտնել սպասման դահլիճը: Ահա թե որտեղ կա էլեկտրական լույս: Ահա թե որտեղ կան բազմաթիվ մարդիկ: Իրիկնային այդ ժամին դա ամենաեռուն վայրն է ամբողջ քաղաքում:

Երկար նստարանների վրա, իրենց ճամպրուկների և պարկերի վրա նստել են մարդիկ, զրուցում են, աղմկում, սպասում են գնացքին: Ոմանք, մեծ մասամբ երեխաները, քնել են: Աղմուկը նրանց չի խանգարում: Իսկ մեզ համար այդ աղմուկը ավելի հաճելի է, քան որևէ երաժշտություն: Չէ՞ որ դա քամու կամ ջրի աղմուկը չէ, այլ կենդանի մարդկանց, մեր սիրելիների:

Առաստաղի տակ վառվում են էլեկտրական լամպերը, կենտրոնում՝ մեծ, չորս անկյուններում՝ ավելի փոքր: Բացի դրանցից երկու լամպեր վառվում են բուֆետի վրա՝ դահլիճի մի անկյունում, և մի լապտեր՝ մի այլ անկյունում, որտեղ լրագրերի ու ժուռնալների վաճառքի կիոսքն է: Շարունակ ելնում մտնում են երկաթուղային ծառայողները՝ համազգեստային գլխարկներով, դեմքերի գործնական արտահայտությամբ: Նրանք տագնապած չեն, ոչ էլ նույնիսկ մտահոգված, այլ հանգիստ են՝ խաղաղ ու նոր ժամանակների հանգստությամբ: Յուրաքանչյուր անգամ նրանց ներս մտնելիս, սպասողներից ոմանք, գլխավորապես՝ գյուղացիներ, վեր են ցատկում տեղերից, մոտենում են նրանց և հարցնում, թե ախր ե՞րբ է գալու գնացքը, թեև չվացուցակն ու ժամացույցը կախված են պատից, իսկ ուշացում չի սպասվում:

Ես ու Գոհարիկը քայլում ենք դահլիճով, խճճվում ենք ամեն կողմ թափթփված իրերի միջև, դիպչում ենք մարդկանց ոտներին, ներողություն ենք խնդրում, մոտենում ենք կիոսքին, բուֆետին, թեև մեզ ոչինչ հարկավոր չէ: Ճիշտն ասած, մենք այդտեղ, ընդհանրապես, ավելորդ ենք: Բայց չէ՞ որ մենք ավելորդ ենք միայն հասարակ, սովորական իմաստով: Իսկ եթե ավելի լուրջ մտածենք, մի՞թե մենք ավելորդ ենք: Մի՞թե հարկավոր չէ, որ որևէ մեկը դիտի այդ ամենը, ուրախանա այն բանի համար, որ կյանքն ընթանում է, կյանքն ապրում է և ոչ թե մեռնում, ոչնչանում: Եթե բոլոր մարդիկ զբաղված են ապրելով և չեն նկատում կյանքը, մի՞թե հարկավոր չէ, որ մեկն ու մեկը գովերգի այն:

Կառամատույցի վրա հնչում է զանգը. գնացքը դուրս եկավ հարևան կայարանից և տասնհինգ րոպե հետո կլինի այստեղ: Ի՞նչ է կատարվում դահլիճում դրանից հետո. . . Զանգի առաջին իսկ հնչյունների հետ մարդիկ վեր են ցատկում իրենց տեղերից, արագ վերցնում են պարկերն ու ճամպրուկները, երեխաներն արթնանում են ու լաց են լինում, աղմուկը դառնում է անտանելի, բոլորը նետվում են դեպի կառամատույց տանող դեռևս փակ դուռը: Իզուր են բղավում կայարանի ծառայողները, թե դեռ վաղ է, թե գնացքում բոլորին էլ տեղ կհերիքի: Ոչ ոք այլևս նստել չի կարողանում, բոլորը խլրտման մեջ են:

Իսկ ես և Գոհարիկը նայում ենք այդ ամենին և ծիծաղում: Իսկ ինչո՞ւ չծիծաղենք: Չէ՞ որ դա անցած տարիների սարսափելի տագնապներից չէ, ոչ գաղթականություն է, ոչ պատուհաս: Դա այն է, որ մարդիկ, պարզապես, դեռ չեն վարժվել երկաթուղուն: Ճիշտ է, այն գոյություն ունի վաղուց, բայց նրանցից շատերը հիմա առաջին անգամ պիտի նստեն գնացք:

Հանկարծ դրսում ինչ-որ տեղ լսվում է ծանր ու աղմկոտ փնչոց՝ ընդհատ-ընդհատ, ինչպես վազքից հետո: Դա շոգեմեքենան է: Նա բարկացած չէ, ոչ էլ որևէ բանով անհանգստացած, նա, պարզապես, հոգնել է:

Փնչոցն արագ ուժեղանում է, անցնում է լուսամուտաների մոտով, մի քիչ թուլանում է և իսկույն ընդհատվում: Վերջ: Գնացքը եկավ:

Դռները բացվում են, ժողովուրդը թափվում է կառամատույց: Դուրս ենք գալիս նաև ես ու Գոհարիկը:

Ինչպիսի՜ գեղեցկություն.. . Ինչպիսի՜ անմոռանալի պատկեր... Կանգնել է մեծ ու երկար գնացքը՝ եկած հեռու վայրերից, ուրիշ քաղաքներից, ամբողջապես ներծծված աշխարհի ընդարձակություններով: Նա կանգնել է՝ հենց ինքը նման վառ լուսավորված քաղաքի փողոցի: Վագոնների բոլոր լուսամուտներում լույս է վառվում: Ճիշտ է, լույսը էլեկտրական չէ, վագոններում վառվում են կարտոֆիլի մոմեր՝ լապտերների մեջ, բայց դրանք շատ են, շատ-շատ…

Վագոններից դուրս են գալիս մարդիկ իրերով: Դռների մոտ, ներքևում, խռնվել են նոր ուղևորները, սպասում են իրենց հերթին՝ վագոն բարձրանալու և մեկնելու: Խռնված մարդկանց մեջ տեղի են ունենում սրտաճմլիկ տեսարաններ: Կինն իր երեխաների հետ միասին հրաժեշտ է տալիս ընտանիքի գլխավորին, լաց է լինում, կոտորվում: Իսկ ընտանիքի գլխավորը մեկնում է ընդամենը հինգ օրով և ընդամենը հարյուր ու մի քանի կիլոմետր այն կողմ: Բայց ախր նա մեկնում է գնացքով: Ընտանիքի գլխավորն ինքն էլ է հուզված, թեև թաքցնում է այդ:

Դեռ չեն հասցնում իջնել ժամանածներից վերջինները, երբ նոր ուղևորներն իրենց համբերությունը կորցրած, աստիճաններով վեր են նետվում վագոնները՝ աղմկելով և իրարից առաջ անցնելով, կարծես փրկվելու համար ջրհեղեղից կամ, աստված գիտե, թե էլ ինչից: Ներքևից, մարդկանց գլուխների վրայով, իրեր են հանձնում նրանց, բղավում են ողջերթի վերջին խոսքեր, տալիս են վերջին պատվերներ՝ չմրսել, թեև ձմեռ չէ, տեղ հասնել որքան կարելի է շուտ, թեև հայտնի է, որ շտապեցնել գնացքը չի կարելի:

Ժխորը մի քիչ խաղաղվում է: Վագոններից դուրս են գալիս տրանզիտային ուղևորները՝ առանց գլխարկի, առանց գոտու, չստեր հագած: Նրանց ձեռքերում կան էմալե թեյամաններ, նրանք գնում են եփած ջուր վերցնելու: Ուրիշները, առանց թեյամանների, շտապում են բուֆետ: Էլի ուրիշները պարզապես զբոսնում են կառամատույցում թարմ օդ ծծելու համար և ցույց տալու, թե ինչպիսի կտրիճներն են նրանք, չեն վախենում, թե գնացքը կգնա, իսկ նրանք ետ կմնան: Նրանք քայլում են դանդաղ, դեմքերի անփույթ արտահայտությամբ և միայն երբեմն աննկատելի տագնապով նայում են գնացքին՝ տե՞ղն է նա արդյոք:

Ինչպե՞ս կուզենայինք ես ու Գոհարիկը հիմա գտնվել այդ գնացքում, մեկնել, միևնույն է, թե ուր, տեսնել ուրիշ քաղաքներ, տեսնել աշխարհը, որ այնքան մեծ է:

Երբևէ, իհարկե, կմեկնենք նաև մենք: Բայց ահա մեզ հարկավոր է հենց հիմա, հենց այս գնացքով...

Առաջին զանգն արդեն խփել է: Խփել է նաև երկրորդը: Այժմ հնչում է երրորդը: Վագոններից ոչ ոք դուրս չի գալիս, ճանապարհ դնողներից ոչ մեկը չի համարձակվել մտնել այնտեղ, վախենալով, որ վերջին րոպեին չի հասցնի դուրս ցատկել: Իսկ մի քանի համարձակները, որոնք, այնուամենայնիվ, եղել են վագոններում մի քանի րոպեով, վաղուց արդեն գտնվում են կառամատույցի վրա՝ դռների և բաց լուսամուտների մոտ հավաքվածների միջև:

Շոգեմեքենայի աղեկտուր սուլոցը ճանապարհ դնող մարդկանցից պոկում է վերջին ճիչեր և բացականչություններ, հեկեկոց և ողջերթի խոսքեր: Գնացքը ցնցվում է և սկսում դանդաղորեն գնալ: Բայց թվում է, թե մենակ նա չէ գնացողը: Նրա հետ անքակտելի, նույն դանդաղ ընթացքով, գնում է նաև ամբողջ կառամատույցը: Ես ու Գոհարիկը նույնպես, ակամայից շարժվում ենք բոլորի հետ միասին: Գնացքն արագացնում է ընթացքը՝ ընթացքն արագացնում է նաև կառամատույցը: Բայց հանկարծ մենք տագնապով նկատում ենք, որ ետ ենք մնում: Դուրս է գալիս, որ մենք կապված չենք էլ եղել գնացքի հետ: Թե՞ կապը խզվեց: Մենք արագացնում ենք մեր քայլը, մենք վազում ենք, բայց վագոնները մեր կողքով վազում են ավելի արագ: Դրանք այլևս վագոններ էլ չեն և չունեն այլևս լուսամուտներ: Մեր մոտով թխկթխկոցով սլանում է ինչ-որ վիթխարի, միասնական զանգված, որն ամբողջապես բաղկացած է հորիզոնական տարտամ գծերից…

Եվ հանկարծ վիթխարի այդ զանգվածը միանգամից վերջանում է, մենք ետ ենք ընկրկում զարմանքից… Գնացքի փոխարեն դատարկությունն է, մթությունը, լռությունը… Մեր ոտքերի տակ կառամատույցի եզրն է, որից քիչ էր մնացել ցած ընկնեինք: Հեռու առջևում թարթում է հեռացող գնացքի կարմիր կրակը…

Մենք երկար նայում ենք այդ կարմիր կետին, մինչև որ նա անհետանում է: Իսկ հետո, դանդաղաքայլ և տխրած, մենք վերադառնում ենք ետ: Կառամատույցի վրա այլևս մարդիկ չկան: Դեռ քիչ առաջ նա նեղ էր, սեղմ, իր լույսով ու բազմամարդությամբ հաճելի, իսկ այժմ որքա՜ն ընդարձակ է և անձուկ, և նրա առջևում մութ տարածությունն է...

Մենք այլևս չենք մտնում սպասման դահլիճ: Այնտեղ այլևս ոչ ոք չկա, բուֆետի և կիոսքի լույսերը հանգած են, հանգած են նաև առաստաղի տակի լույսերը, վառվում է միայն մեկը, այն էլ ոչ թե մեջտեղինը, այլ անկյունի լույսերից մեկը... Հավաքարարուհին մաքրում է հատակը: Գիշերն ուրիշ մարդատար գնացք չի լինելու:

***

Կայարանի շենքի առջևի մութ և փոքրիկ հրապարակում այդ ուշ ժամին կանգնած են ընդամենը մի քանի կառքեր, որոնք սպասում են պատահական ուղևորների: Կառապանները նստել են իրենց տեղերում՝ մտրակները ձեռքերին: Ձմեռները նրանք հագած են լինում բաց կապույտ հաստ համազգեստ՝ կարմիր շորե գոտիով և ոսկեգույն փոքրիկ կոճակներով: Իսկ ամառները՝ սև ժիլետի տակ հագնում են՝ կարմիր լայն բլուզ: Նրանք կրում են ցիլինդրներ՝ կողքերի եզրերը վեր ծռած: Կառքերի վրա, կառապանի բարձր նստելատեղի երկու կողմերում, կան լապտերներ: Դրանց մեջ թարթում է հաստ մոմի փոքրիկ կտորների լույսը:

Ամեն անգամ մեզ քաղաք տանող կառապանը, տեսնելով մեզ, մտրակում է ձիերին և կառքը մոտ է քշում: Մենք նստում ենք կառք և գնում:

Ի՜նչ երկար է գնում կառքը մինչև քաղաքի կենտրոն, ի՜նչ երկար: Եվ ի՜նչ միօրինակ են պտտվում անիվները, որոնց շրշոցը մենք լսում ենք շարունակ: Ի՜նչ համաչափ են թխկթխկում ձիերի սմբակները սալահատակին: Ի՜նչ հաճելի է վեր-վեր թռչում ձիերի մեջքի վրա ձիասարքը՝ կաշվի բարակ երիզներից բաղկացած և մետաղե փայլուն ճարմանդներով զարդարված, առաջացնելով մի փափուկ հնչյուն՝ «ցապ-ցապ-ցապ…»:

Մենք չենք տեսնում ձիերի ոտքերը, այլ տեսնում ենք միայն, թե ինչպես են սեղմվում ու ընդարձակվում նրանց գավակի մկանները, սեղմվում ու ընդարձակվում, էլի, էլի, անդադար և միակերպ.. . Կառքի լապտերների լույսն ընկնում է նախ ձիերի գավակների վրա, և միայն այդտեղից, չկարողանալով կառչել-մնալ դրանց ողորկ ու թեք մակերեսի վրա, հոսում է դեպի սալահատակ:

Ես ու Գոհարիկը լուռ, սառած աչքերով, կարծես ինքնամոռացության մեջ, նայում ենք փողոցին: Կառապանն, ըստ երևույթին, հասկանում է մեզ, նա չի կատարում ոչ մի կտրուկ շարժում, չի արտասանում ոչ մի բառ, չի շտապեցնում ձիերին, որպեսզի չխախտվի մեր էքստազը:

Նայում ենք ես ու Գոհարիկը մեր քաղաքին, արդեն քնած տներին, դռների վերևում մթության մեջ թարթող լապտերների շարքերին, անկյունային խանութների լուսավոր ցուցափեղկերին:

Հատող, ավելի նեղ փողոցների խորքում արդեն լիակատար մթություն է: Լապտերների մեջ եղած նավթը, լցված այն հաշվով, որ բավականացնի մինչև գիշերվա տասը-տասնմեկը, արդեն այրվել է, և լամպերը մարել են: Առավել ևս վառ է երևում մեզ անկյունային խանութների լույսը:

Մեզ հատկապես դուր է գալիս փողոցի այն հատվածը, որտեղ կողք կողքի կանգնած են ութ ցուցափեղկեր, չհաշված երեքը՝ անկյունից այն կողմ: Դա լույսի մի ամբողջ գետ է, որով անցնում է մեր կառքը դանդաղ ու երկար: Ինչպիսի՜ անհամբերությամբ ենք մենք սպասում փողոցի այդ հատվածին: Ահա մենք մոտենում ենք, ահա ձիերը ողողվեցին լույսով, ահա և ամբողջ կառքն է լողանում լույսի մեջ.. .

Մենք նորից մտնում ենք կիսախավարի մեջ, գնում ենք բավական երկար, ապա մեր կառքը, մի փոքր արագացրած ընթացքով, իջնում է մի ոչ մեծ վայրէջքով:

Ներքևում՝ մեր ձախ կողմում, իր ընդարձակ բակի մեջ կանգնած է վաղուց չգործող բաղանիքի սև, մեծ շենքը՝ կտուրի վրա մեծ ու փոքր գմբեթներով: Լուսնի լույսի տակ փայլում են գմբեթների փոքր լուսամուտների ապակիները, երևում է քարերի արանքներում աճած խոտը:

Բաղնիքի դարպասի առջև, փողոցում, մեղմ խոխոջում է աղբյուրը: Կողքի պատի տակով, իր ծանծաղ հունով, նույնպես մեղմ խոխոջալով, հոսում է գետակը:

Կառքը նորից բարձրանում է վեր, էլի որոշ ժամանակ գնում է հարթ տարածությամբ, ապա իջնում և բարձրանում է ևս մի անգամ, և ահա մենք տեսնում ենք մեր առջև, մի քիչ ցածրում, վերջերս բաց արված քաղաքային հրապարակը, որը լուսավորված է լապտերների և ցուցափեղկերի էլեկտրական լույսով: Դա քաղաքի կենտրոնն է:

Կառապանը, որը կարծես թե նույնպես գտնվում էր ինչ-որ կաշկանդման մեջ, սթափվում է, աշխուժանում, բղավում է ձիերի վրա, շաչեցնում է օդում մտրակը: Ես ու Գոհարիկը կտրուկ վերադառնում ենք այս աշխարհը, նայում ենք իրար, ժպտում: Կառքն աղմուկով իջնում է հրապարակ, կանգ է առնում փողոցներից մեկի անկյունում: Մենք ցատկում ենք գետին, հրաժեշտ ենք տալիս իրար, բարի գիշեր ենք մաղթում միմյանց և քաղաքին՝ մեր երրորդ սիրեցյալին, և գնում ենք մեր տները:

***

Հասար դու երջանիկ օրերի, երիտասարդ:

Դու, երիտասարդ, երազում էիր լինել կուշտ, և ահա կուշտ ես: Երազում էիր պառկել փափուկ և մաքուր անկողնում, և դու պառկում ես: Դու քնում ես ուշ՝ կինոյից, ներկայացումից կամ Գոհարիկի հետ միասին քո քաղաքում մի լավ զբոսանք կատարելուց հետո: Ասենք, ուրիշները նույնպես, հիմա ավելի ուշ են փակվում իրենց տներում: Նավթի բազմաթիվ լապտերներով լուսավորված փողոցներում դուք այժմ հաճախ եք տեսնում անցորդների: Փոխվել են քո ցերեկները, երիտասարդ, փոխվել են նաև գիշերները:

Ճիշտ է, դու հիմա էլ երբեմն արթնանում ես գիշերները՝ քնիդ մեջ շան լուսնահաչը լսելուց ձանձրացած: Բայց դու այլևս չես տխրում և սարսափում: Լուսնի լույսի տակ քո քաղաքը փռված է լույսերի մանր ուլունքներով զարդարված: Գիշերվա լռության մեջ դու մտովին լսում ես քնած քո մեծ քաղաքի, այո, այո, արդեն մեծ քաղաքի հազարավոր և հազարավոր բնակիչների անխռով շնչառությունը:

Իսկ ինչպիսի՜ եռուզեռ է քո տնից հեռու կայարանում, երիտասարդ: Գիշերներն այնտեղով անցնում են ապրանքատար երկու գնացքներ և, բացի դրանից, կայարանով գնում-գալիս են ինչ-որ շոգեմեքենաներ, և քաղաքի վրա շարունակ տարածվում է դրանց շչակների կանչը:

Սիրիր այն, երիտասարդ, սիրիր քո քաղաքը, սիրիր ուժեղ, չէ՞ որ նա քո երազի մարմնացումն է:

Երջանիկ ես դու, երիտասարդ, այն էլ որքա՜ն երջանիկ:

4. Տխուր հիասթափություն

Քաղաքում հայտնվեցին ավտոմեքենաներ: Դրանց ողորկ, լաքած մարմիններն սկսեցին երևալ մերթ այս փողոցում, մերթ այն՝ փայլելով արևի տակ: Օրվա ընթացքում, այնուամենայնիվ, դրանց մակերեսը ծածկվում էր փողոցի փոշու նկատելի շերտով և դառնում անփայլ:

Ես և Գոհարիկը հաճախ էինք տեսնում դրանք ցերեկով, իսկ եթե գտնվում էինք շենքում, ապա ունկնդրում էինք դրանց ճչակներին: Մենք իսկույն սիրեցինք դրանց: Դրանք մեր քաղաքի աճման նոր ապացույցներն էին: Դրանք անմիջապես դարձան մեր աճող քաղաքի անփոխարինելի տարրերը: Հայացքով կամ լսողությամբ հետևելով դրանց, մենք կամացուկ շշնջում էինք

Վերհառնի բանաստեղծությունները, որոնք մեծ քաղաքն են փառաբանում, ընդ որում շուտ-շուտ բաց էինք թողնում զայրույթի նրա բառերն ու տողերը, որովհետև դրանք հասցեագրված էին կապիտալիստական քաղաքին:

Երկար ժամանակ մենք երեկոները չէինք տեսնում ավտոմեքենաները: Կամ հանգստանում էին դրանք՝ ինչպես հոգնած անասուններ, կամ սլանում էին մեր երթուղու հետ առնչություն չունեցող ուրիշ փողոցներով: Բայց, վերջապես, հասավ այն օրը, ավելի ճիշտ՝ երեկոն, երբ դրանցից մեկը հայտնվեց նաև մեր ճանապարհի վրա:

Ես և Գոհարիկը մեր սովորական փողոցով գնում էինք կայարան: Արդեն մութ էր, նավթի լապտերները վառված էին, լուսավոր փայլում էին անկյունային խանութների ցուցափեղկերը: Քայլում էինք մենք ըստ սովորականի, դանդաղ, կանգ առնելով այն ամենի առջև, ինչի մեջ մենք գտնում էինք որևէ առանձնահատուկ բան, հատուկ գեղեցկություն:

Ահա նստելու երկարավուն տափակ քարը՝ դռան մոտ: Դրա վրա, հավանաբար դեռ քիչ առաջ, նստել են կանայք և նայել են անցորդներին, սպասելով, որ աշխատանքից վերադառնան իրենց տղամարդիկ: Բոլոր այդպիսի քարերի վրա, ամբողջ փողոցով մեկ, նստել են կանայք: Քաղաքից այն կողմ, ինչ-որ հեռու տեղ, մայր է մտել արևը՝ լուսավորելով փողոցը հրաժեշտի շողերով: Բայց ոչ ոքի հոգին տխուր չի եղել, որովհետև դա եղել է այն ժամը, երբ վերադառնում են ամուսիններն ու հայրերը, որդիներն ու եղբայրները, վերադառնում են ողջ-առողջ: Իսկ արևն ի՞նչ: Նա հրաժեշտ է տալիս ամեն երեկո, բայց գլխապատառ վերադառնում է ամեն առավոտ: Մի՞թե նա կարող է թողնել հեռանալ այս հրաշալի, կենսախինդ աշխարհից:

Իսկ առավոտյան, երբ տղամարդիկ հրաժեշտ են տալիս և գնում, դարձյալ տխուր չեն լինում կանանց հոգիները, որովհետև իսկույն գալիս է նրանց մոտ արևը՝ հուրհրան, առատ, և ասում է նրանց, որ հարկ չկա անհանգստանալու, տղամարդկանց ոչ մի վատ բան չի պատահի, սա այն ժամանակները չեն: Նրանք պարզապես գնացին նոր աշխարհը կառուցելու և երեկոյան անպայման կվերադառնան տուն, արևս վկա:

Տխուր չենք նաև ես ու Գոհարիկը: Մենք կանգնել ենք այդ թափուր քարի առջև, իրիկնային ժամին, մեր ամբողջ էությամբ զգում ենք արևը, որը գնացել է և որը պիտի գա: Տան պատի ետևում, լուսամուտափեղկերից այն կողմ, մենք զգում ենք երջանիկ ընտանիքի ներկայությունը: Բոլորը տանն են…

Դռան վերևում վառվում է նավթի լամպը: Դրանցից մայթի վրա ընկել է լուսավոր կիսաշրջանակ: Նստելուց ողորկված քարը փայլում է դրա տակ: Լույսով ենք ողողված նաև մենք: Ճիշտ է, այդ կիսաշրջանակը շրջապատված է մթությամբ, բայց դրանից երկու քայլ այն կողմ, գետնի վրա ընկած է մի ուրիշ այդպիսի լուսավոր կիսաշրջանակ, այն կողմ՝ երրորդը, տասներորդը…

Հանկարծ ետևից լսվեց մարդատար ավտոմեքենայի ծանոթ ճչակը: Մենք ետ շրջվեցինք: Անմիջապես հայտնվելով անկյան ետևից, ավտոն սլացավ դեպի մեզ: Փողոցը սուզվեց կուրացուցիչ սպիտակ լույսի մեջ, որը ժայթքում էր ավտոմոբիլի երկու լապտերներից: Լույսն ուղղակի խփվեց մեզ, դարձրեց մեզ տեսանելի՝ մինչև մեր վերջին կոճակը: Նա, կարծես, մերկացրեց մեզ կամ բռնեց ինչ-որ անպատշաճ գործի վրա: Մեքենայի միջից մարդիկ երևի նայում էին մեզ, տեսնում մեր շփոթմունքը և ծիծաղում:

Սպիտակ լույսից շլացած, մենք ուզում էինք դուրս գալ դրա լայն դաշտի միջից, բայց մութ տեղ չէինք գտնում: Լույսը հանկարծ ինքը ետ ցատկեց մեզանից: Մի վայրկյան փայլեց մեքենայի ապակին, դրա ետևում մենք տեսանք կաբինի առաստաղին ամրացված փոքրիկ լամպի դեղին լույսը և այդ լույսի տակ՝ շոֆերի և էլի մի մարդու պրոֆիլները:

Մենք նայեցինք մեքենայի ետևից: Փողոցի խորքի մթությունը, որ կանգնած էր սև ու միաձույլ զանգվածով, արագ նոսրանում և հալչում էր գրոհող լույսի տակ: Մթությունից դուրս էին լողում պատեր, դարպասներ, դռներ, լուսամուտներ, կտուրներից հորիզոնականորեն ձգված ջրհորդաններ... Դրանք բոլորն արագ դառնում էին ավելի ու ավելի լուսավոր և իսկույն հանգչում:

Գնալով կայարանի ուղղությամբ, լույսը, վերջապես, անհետացավ:

Մենք նայեցինք մեր շուրջը: Այս որտե՞ղ ենք մենք…

Մենք կանգնած էինք նավթի լապտերի լույսի մեջ, որը խիստ ջրիկացված էր մթությամբ.. . Ավելի ճիշտ, դա լույս չէր, այլ լրիվ մթություն, որի վրա ցանված էր տնայնագործական լույսի ինչ-որ ցածրորակ, ուժը կորցրած փոշի...

Նույնպիսի կիսաշրջանաձև, մի քիչ գունաթափված մթություն կանգնած էր մեզանից երկու քայլ այն կողմ՝ հարևան դռան առջև: Իսկ այնուհետև գտնվում էր դատարկ դաշտերին կամ անլուսին երկնքին հատուկ նախաստեղծ մաքուր խավարը…

Իսկ ո՞ւր անհետացավ լույսերի մեջ շողշողացող փողոցը: Ի՞նչ պատահեց նրան...

Ոչինչ: Պարզապես նրանով անցավ ավտոմեքենան:

***

Գնացքի մեկնելուց հետո դուրս գալով կայարանամերձ հրապարակը, մենք այդ երեկո չլսեցինք մեր ծանոթ կառապանի մտրակի շաչոցը և մեզ չմոտեցավ մեր կառքը:

Առաջին րոպեին դա մեզ թվաց տարօրինակ, բայց և իսկույն մենք հասկացանք. դե ի՞նչ, նա գտել է ավելի ձեռնտու ուղևորների և մեկնել է: Նա հո պարտավո՞ր չէ ամեն անգամ տանել մեզ:

Մենք տատանվում էինք՝ մեկնե՞նք արդյոք մի այլ կառքով: Արդյոք կհասկանա՞ մեզ մեր նոր կառապանը: Ամբողջ ճանապարհին չի՞ շաչեցնի մտրակն ու հայհոյի ձիերին: Չի՞ արագացնի կամ դանդաղեցնի նրանց՝ խախտելով ընթացքի ռիթմիկ միօրինակությունը: Դեռ կարող է կանգնեցնել կառքը հին բաղանիքի մոտ՝ աղբյուրից ջուր տալու ձիերին...

Մենք կանգնած էինք անորոշության մեջ: Մյուս կառապանները, տեսնելով, որ մեր ծանոթ կառքը չի մոտենում մեզ, և նկատելով, որ նա չկա, բոլորը միանգամից շարժվեցին տեղերից՝ մեզ կառք հրամցնելու: Բայց Գոհարիկը նրանց կասեցրեց:

— Գնանք ոտքով,— առաջարկեց նա ինձ:

Մենք արդեն պատրաստվում էինք գնալ, երբ կայարանի շենքից դուրս ելան երկու մարդ: Դրանցից մեկը՝ միջին տարիքի, մեզ ծանոթ էր: Մյուսին, որը հավանաբար նոր էր ժամանել, մենք չէինք ճանաչում:

Մեր ծանոթը, հին հեղափոխական, քաղաքի պատասխանատու աշխատող, սիրում էր Գոհարիկին: Մենք այդ գիտեինք: Բայց նա սիրում էր այն մարդու անհույս սիրով, որը գիտե, որ իր երիտասարդությունն արդեն անցել է, այլևս չես վերադարձնի, չես դարձնի ավելի լավ ու երջանիկ…

Նա խնամքով թաքցնում էր իր սերը բոլոր մարդկանցից և հատկապես՝ Գոհարիկից: Նա Գոհարիկի հետ խոսում էր զուսպ, ժլատ, հազիվ նկատելի թախիծի ստվերը դեմքին: Նա, հատկապես, չէր կարողանում թաքցնել իր թախիծն այն ժամանակ, երբ տեսնում էր Գոհարիկին ինձ հետ:

Ես, որ հարգում էի նրան և նրա զգացմունքը, այդպիսի դեպքերում անհարմար էի զգում ինձ այն բանի համար, որ ես երիտասարդ եմ, իսկ նա՝ սպիտակած քունքերով, որ ես բարձրահասակ եմ ու բարեկազմ, իսկ նա՝ տարիների բեռի տակ ծանրացած, որ իմ առջև բաց են կյանքի բոլոր խնդրությունները, իսկ նրան, որը երջանկություն է նվաճել ինձ համար, վիճակված է եղել աղքատ ու դժվար երիտասարդություն…

Տեսնելով Գոհարիկին, նա ուրախացավ: Ինձ նա չնկատեց, ավելի ճիշտ՝ չճանաչեց և կարծեց, թե ես նրա հետ առնչություն չունեմ: Այնուամենայնիվ նա իսկույն ճնշեց իր վայրկենական, անհեռանկար ուրախությունը:

— Գոհարի՞կ,— բարևեց նա հարցական բացականչությամբ,— ինչո՞ւ ես կանգնել այստեղ: Քաղա՞ք ես գնալու:

— Այո:

— Դե ուրեմն գնանք միասին:— Եվ դառնալով դեպի իր ուղեկիցը, ներկայացրեց.— քաղաքի լավագույն կոմերիտուհիներից մեկը:

Այդ րոպեին մթության մեջ վառվեցին ավտոմոբիլի կրակները: Մարդատար մեքենան մոտեցավ մուտքի աստիճաններին:

— Ե՛կ,— դիմեց Գոհարիկն ինձ:

Մեր ծանոթն ինձ տեսավ: Մի կարճ վայրկյան նրա ազնիվ ու հոգնավաստակ ճակատի վրա երևաց թախիծի անտանելի ցավը, բայց և իսկույն նա զվարթ բարևեց ինձ և բաց արեց մեքենայի դռնակը: Նա մեզ նստեցրեց ետին նստելատեղում, իսկ ինքը, ժամանած մարդու հետ, սեղմվեց շոֆերի կողքին: Դռնակը նա փակեց անաղմուկ, կամաց, կարծես վախենալով, որ նրան չկասկածեն հոգեկան տագնապի մեջ: Ամբողջ ճանապարհին նա խոսակցում էր ժամանածի և շոֆերի հետ՝ քաղաքավարի կերպով ուշադրություն չդարձնելով մեզ վրա:

Նշանավոր պահ մեր կյանքում... Մենք առաջին անգամ ավտոմեքենա ենք նստել: Ահա հիմա նա կշարժվի իր տեղից, և մենք կմեկնենք…

Եվ այդտեղ կատարվեց մի անհավատալի բան:

Կայարանամերձ հրապարակն իր շրջակա շենքերով՝ փոքրիկ, բայց և այնպես ծանր, քարե, հանկարծ հոլի թեթևությամբ շուռ եկավ իր առանցքի շուրջը և դեպի ավտոն դեմ արեց քաղաք տանող մեր փողոցը: Հետևյալ վայրկյանին մենք արդեն գտնվում էինք այդ փողոցում և սլանում էինք անհավատալի արագությամբ: Ավելի արագ, քան մի րոպեում, մենք անցանք փողոցի հարթ հատվածը և իջանք առաջին փոսը: Այնտեղից բարձրացանք նույնպես իսկույն, իջանք երկրորդ փոսը՝ նույնպես իսկույն, կարծես բարձունքներն ու ցածրունքները պարզապես դարուփոսեր լինեին հարթ ճանապարհի վրա:

Մեր երկու կողմերում կանգնած էր մթությունը, բայց երբ մենք մեր առջև նստած մարդկանց գլուխների վրայով նայում էինք առաջ, ապա տեսնում էինք փողոցը՝ լուսավորված այնպիսի սրընթաց լույսով, որը կարծես մաքուր ջրի շիթ լիներ՝ հրշեջ խողովակից դուրս հորդող: Նա լվանում էր մթության կեղտն առարկաների վրայից, մենք դրանք տեսնում էինք ինչպես ցերեկով:

Մենք սլացանք-անցանք թույլ լույս արձակող յոթ-ութ հատ ինչ-որ լապտերների մոտով, որոնք կողք կողքի շարված էին մայթի վրա: Ի՞նչ բան է, մի՞թե դրանք այն ութ ցուցափեղկերն էին, որոնք, ինչպես մեզ թվում էր առաջ, լուսավորում էին փողոցի այդ հատվածը: Ավտոմոբիլի լապտերների սպիտակ վառ լույսը ծածկեց խանութից դուրս շպրտած դեղին լույսի այդ կեղտաջուրը:

Մեր առջև հանկարծ ծագեցին կրակների ինչ-որ թույլ կետեր: Մեքենան կանգ առավ: Մի՞թե դա կենտրոնական հրապարակն է: Մի՞թե մենք արդեն հասել ենք…

Մեր մարմինների մեջ դեռ չէր մարել ավտո մտնելու մեր շարժումը, և ահա մենք արդեն պետք է կատարեինք այնտեղից դուրս գալու շարժումը:

Մենք դուրս ելանք մեքենայից և ակամա սկսեցինք աչքերով փնտրել կայարանամերձ հրապարակը, որը հենց նոր այստեղ էր, այստեղ մենք հենց նոր նստեցինք մեքենա…

Ես ու Գոհարիկը նայեցինք իրար. մենք կանգնել էինք անշարժ շշմած:

Կատարվել էր մի մեծ, անուղղելի բան: Կատարվել էր այնպիսի մի բան, որի մասին մենք դեռ ի վիճակի չէինք լրիվ հաշիվ տալու: Մեր քաղաքը փոքրացել էր... Մի քանի րոպեում նա, լուսավոր ու զվարթ, վերածվել էր անհիրապույր փոքրիկ քաղաքի...

Բայց ախր անհնար է, որ դա կատարվի մի քանի րոպեում... Ուրեմն նա միշտ է եղել այդպիսին, իսկ մենք պարզապես չենք նկատել այդ: Բայց ավտոմոբիլը մի քանի րոպեում անցավ նրա միջով համարյա ծայրեծայր և ապացուցեց այդ...

Մեզ համար շատ ծանր էր համոզվել դրանում: Շատ: Մենք համառում էինք: Առաջինը խոսեց իմ ընկերուհին:

— Գնանք կայարան,— ասաց նա:

Ես ոչինչ չհարցրի. ես հասկացա նրան: Եվ մենք արագ-արագ, առաջին անգամ առանց նայելու փողոցին, գնացինք կայարան:

Արդեն ուշ երեկո էր, համարյա գիշեր: Կայարանի շենքի պատի տակ համառորեն շարունակում էին կանգնած մնալ երկու-երեք կառք: Դրանցից մեկը մերն էր: Կառապանն ուղևորներին քաղաք տանելուց հետո վերադարձել էր կայարան՝ ըստ երևույթին հույս ունենալով մեզ վրա:

Տեսնելով մեզ, նա ուզեց կառքը քշել մեզ ընդառաջ, բայց անորոշությամբ կասեցրեց ձիերին: Չէ՞ որ մենք դեռ նոր ենք գալիս, կուզենա՞նք արդյոք վերադառնալ իսկույն: Բայց ես նշան արեցի, և կառքը մոտեցավ:

Նստելով, մենք ըստ սովորականի սեղմվեցինք իրար, ըստ սովորականի նայեցինք կառքի լապտերներին, որոնց լույսը մեզանից պատնեշված էր ֆանարի ետին, մետաղե պատով, ըստ սովորականի տեսանք լույսի արտացոլումը ձիերի խաղացկուն գավակների վրա: Իսկ հետո, մոռանալով կառքն ու լուծվելով նրա շրշոցի ու շարժումների մեջ, մենք սկսեցինք անթարթ հայացքով նայել շրջապատին:

Մի պահ մենք նույնիսկ մոռացանք մեր հոգեկան տագնապը: Բայց մեզ վիճակված չէր ուղղել անուղղելին:

Կառքը գնում էր սովորականից դանդաղ: Թվում էր, թե կառապանը գիտեր ամեն ինչ և դիտմամբ էր քշում դանդաղ, որպեսզի վերադարձներ մեզ մեր կորցրած տեմպը, վերադարձներ փողոցին՝ նրա տարածությունը, լամպերին՝ նրանց ուժը, տնակներին՝ նրանց հմայքը...

Բայց մեզ հարկավոր չէր կեղծիք: Ինչո՞ւ քշել կանխամտորեն դանդաղ: Միևնույն է, մենք նայում էինք տներին և նկատում, թե որքան փոքր էին դրանք, մենք տեսնում էինք, թե որքան թույլ է նավթի լամպերի լույսը՝ թե՛ հինգ գծանիներինը, թե՛ ութ գծանիներինը: Անցնելով տասնմեկ ցուցափեղկերի մոտով, մենք հայտնաբերեցինք, որ դրանց լույսը կրկնակիորեն, եռակիորեն ավելի թույլ էր, քան թվացել էր մեզ մինչև այժմ:

Իսկ կառքն անդրդվելի միամտությամբ աշխատում էր խաբել մեզ: Կամ գուցե կառապանն այդ անում էր ո՞չ դիտմամբ: Գուցե ձիերը հոգնել էին, և նա պարզապես խնայո՞ւմ էր նրանց: Իզուր: Ձիերին ոչինչ չի պատահի, իսկ մեզ հարկավոր է գտնել մեր կորցրած տեմպը, նայել մեր քաղաքին այն աչքերով, որոնցով մենք նայել էինք անցյալում: Դրա համար էլ հենց Գոհարիկն ասաց նրան.

— Քշիր սովորականի պես:

Կառապանը զարմացած շուռ եկավ: Դրանք համարյա միակ խոսքերն էին, որոնք նա լսեց մեզանից՝ մեր ծանոթության ամբողջ ժամանակաշրջանում:

— Մի՞թե սովորականի պես չէ,— հարցրեց նա:

— Սովորականի պես է,— ասացի ես և նայեցի Գոհարիկին:

Մենք հասկացանք միմյանց:

Կառքի ընթացքը, իսկապես որ, սովորական էր: Ավտոմոբիլի պատճառով էր, որ այն մեզ թվում էր դանդաղ:

Ավտոմոբիլը մեր աչքերը բացել էր:

Մենք իզուր էինք կառք նստել: Ի՞նչ էինք ուզում անել դրանով: Վերադառնալ դեպի մեր քաղաքի մասին ունեցած մեր կեղծ պատկերացո՞ւմը: Խաբե՞լ մեզ:

Մենք ամոթ զգացինք: Մենք սկսեցինք անհամբերությամբ սպասել այդ ձգձգված և այլևս ավելորդ դարձած ուղևորության վերջանալուն: Հասնելով հրապարակ, մենք արագ վար իջանք կառքից և նույնիսկ մոռանալով հրաժեշտ տալ իրար, գնացինք մեր տները:

***

Ապա ի՞նչ էիր կարծում, երիտասարդ:

Դա միայն հեքիաթի մեջ է, որ երջանկությունը մարդու վրա թափվում է միանգամից, մի օրում:

Ճիշտ է, կյանքում էլ է պատահում այդպիսի մեծ, շրջադարձային օր, երբ վճռվում է առանձին մարդու և ժողովրդի, առանձին մարդու և դասակարգի բախտը: Դա անվանվում է հեղափոխություն: 1920 թվականի նոյեմբերի 29-ին դա կատարվեց նաև Հայաստանում, երկիրը դարձավ խորհրդային: Քո և քո ժողովրդի ապրել-չապրելու հարցը վճռվեց ձեր օգտին՝ ապրել և ապրել ազատ, երջանիկ:

Այո, դա քո կյանքի ամենամեծ, ամենավճռական օրն էր, երիտասարդ: Նա հնարավոր դարձրեց երջանկությունը: Բայց այդ երջանկությունը ձեռք բերելու համար հարկավոր է դեռ շատ պայքարել և աշխատել:

Իսկ դու այդպես չէիր կարծում, երիտասարդ: Հեղափոխության խնդությունն այնպես էր տիրապետել հոգիդ, որ քեզ թվում էր, թե արդեն ամեն ինչ նվաճված է միանգամից, մեկ-երկու տարում. . .

Ոչ, երիտասարդ, նվաճված է դեռ շատ քիչ բան: Եվ մեծ չէ այն երջանկությունը, որը խարսխված է այդ քչի վրա: Դու պարզապես չգիտես դեռևս, թե ինչ է մեծ, իսկական երջանկությունը: Իսկ չգիտես նրա համար, որ դեռ երբեք չես ճաշակել այն:

Բայց կլինի երջանկությունը, կլինի: Մի վշտանա, որ կյանքը հեքիաթ չէ և նույնիսկ հեղափոխությունը երկու տարում չվերածեց քո երկիրը հեքիաթի: Հիշիր, երիտասարդ, թե ինչ վիճակումն էր քո երկիրը՝ խորհրդային իշխանություն հաստատելուց առաջ: Բայց ոչ, հարկավոր չէ հիշել, դա սարսափելի է քեզ համար: Դու դա կհիշես հետո, երբ ամեն ինչ դառնա հեռավոր անցյալ. . .

Եվ մի մոռանա, երիտասարդ, որ խորհրդային Ռուսաստանը, որը եղբայրական օգնության ձեռք է մեկնել ձեզ, ինքն էլ դեռ դուրս չի եկել ավերածությունից և աղքատությունից: Իր ընդարձակ հարթությունների վրա նա վերջերս դեռ վարում էր քաղաքացիական պատերազմ՝ հակահեղափոխության դեռ լրիվ չջախջախված ուժերի դեմ:

Դե ուրեմն ասա, երիտասարդ, հնարավո՞ր էր արդյոք այսպիսի պայմաններում, որ երկու տարում քո երկիրը վերածվեր ծաղկաստանի: Եվ որ քաղաքներում կանգնեին բազմահարկ տներ, ծխեին մեծ գործարաններ ու ֆաբրիկաներ, գցվեին զբոսայգիներ ու պուրակներ, ասֆալտվեին մայթերն ու սալահատակը, սլանային ավտոմոբիլներն ու տրամվայը. . . Եվ որ քաղաքում, ինչպես և գյուղերում, փայլեր էլեկտրականությունը, դաշտերում աշխատեին տրակտորները, ոռոգվեին խոպանները, չորանային ճահիճները. . . Եվ որ չմնային այլևս երկրում գարշելի մարդիկ, ստոր մարդիկ, որոնք խանգարում են ձեզ, պատրաստ են ամեն ինչի՝ վերականգնելու համար մարդու տիրապետությունը մարդու վրա. . .

Ոչ, երիտասարդ, երկու տարվա ընթացքում դա անհնար է: Իհարկե, ես չեմ ասում՝ ընդհանրապես: Միանգամայն հնարավոր է, որ ապագայում, երբ խորհրդային ողջ երկիրը լինի զորեղ և հարուստ, նոր խորհրդայնացող այլ երկրները երկու տարում նվաճեն անչափ ավելի մեծ երջանկություն, քան նվաճված է քեզ մոտ հիմա: Այո, կլինի դա, բայց հետո: Իսկ այժմ. . .

Իսկ այժմ, ահա. փոքրիկ, անհյուրընկալ քաղաք՝ առանց էլեկտրականության, առանց տրանսպորտի, առանց զբոսայգիների ու ծաղկանոցների, տները՝ ապրելու անհարմար, փողոցների սալահատակը՝ քայլելու անհարմար, արհեստանոցները՝ աշխատելու անհարմար… Ահա թե ինչպիսին է քո փոքրիկ քաղաքը: Եվ դու ապրում ես այդտեղ…

Դու չգիտեիր, երիտասարդ, թե այդպիսին է: Բայց մեծ երջանկության մի բեկոր՝ ավտոմոբիլը, ընկավ ձեր քաղաքը և բացեց քո աչքերը: Փառաբանիր ավտոմոբիլը, երիտասարդ: Եվ, ո՞վ գիտե, եթե իսկապես, քեզ վիճակված է դառնալ երբևէ գրող, փառաբանիր ավտոմոբիլը նաև գրականության մեջ, որպեսզի մարդիկ իմանան:

***

Մենք դադարեցինք հիանալուց մեր փոքրիկ քաղաքով: Մենք հիասթափվեցինք նրանից: Դա տխուր հիասթափություն էր: Իզուր էր մեր կառապանն սպասում կայարանում իր սովորական ուղևորներին: Իզուր էր մեր փողոցն սպասում նավթի լամպերի էնտուզիաստներիս: Մենք այժմ մեր քաղաքը տեսնում էինք այնպես, ինչպես նա կար: Դա ցավ էր պատճառում մեզ: Բայց դա իրականություն էր:

Այնուամենայնիվ, միայն այդ իրականությունը չէ, որ տեսնում էինք մենք: Մենք տեսնում էինք նաև, թե ինչպես մեր փոքրիկ քաղաքը կատարում էր վար ընկած մարդու առաջին ճիգերը՝ ոտքի ելնելու համար: Այստեղ կարկատվում է ջարդված մի մայթ, այնտեղ բարձրանում է փլված մի պատ… Ոչ թե նայել ու հիանալ, այլ օգնել էր հարկավոր մեր քաղաքին՝ նրա ճիգերի ժամանակ: Օգնել, նվաճել քո երջանկությունը սեփական ձեռքով:

Բայց ավա՜ղ: Մեզ երկուսիս համար դա առայժմ նշանակում էր լավ սովորել: Եվ մենք սովորում էինք լավ՝ անիծելով ուսուցման յուրաքանչյուր օրը, որը խանգարում էր հաջորդ օրվա գալուն: Մենք շտապում էինք: Մենք շտապում էինք կառուցել մեր քաղաքը:

Իհարկե, մենք կարող էինք կիսատ թողնել ուսումը և ձեռնարկել աշխատանքի, բայց ինչ լավ է, որ վարվեցինք այդպես: Դեռ առանց հասկանալու, որ դա դիալեկտիկա է, մենք ընդունեցինք դրա առաջին գործնական դասը.— կառուցող դառնալու համար մեզ հարկավոր է առայժմ չդառնալ այդպիսին, այլ սովորել:

Մի անգամ, ցերեկով, ես ու Գոհարիկն առիթ ունեցանք անցնել դեպի կայարան տանող մեր փողոցով: Հասնելով տասնմեկ ցուցափեղկեր ունեցող խանութին, մենք ականատես եղանք մի զարմանալի տեսարանի. խանութը քանդում էին: Բազմաթիվ բանվորներ՝ լինգերն ու բահերը ձեռքերին, վխտում էին տափակ կտուրի վրա, քանդում էին այն: Փոշին կանգնել էր ամեն կողմ: Մաս առ մաս խորտակվում էին առաստաղները, պատերը, հողի ու քարի կույտերի միջից ցցվում էին փտած, որդակեր գերանների ծայրերը: Լույս աշխարհ էին դուրս եկել խանութի ներքին պատերը՝ կապույտ կամ վարդագույն ներկված, քանդված դարակների սպիտակ հետքերով.. .

Փողոցը զրկվում էր իր լավագույն խանութից, զրկվում էր տասնմեկ ցուցափեղկերի լույսից: Եվ քանդում էին ոչ միայն խանութը, այլև երեք հարևան տներ՝ մեր փողոցի վրա և երկու այլ տուն՝ հատող փողոցի: Բայց մենք չէինք ափսոսում ոչինչ: Թող քանդեն: Գուցե այդ տեղում կառուցեն որևէ ավելի լավ բան:

Մեր պրովինցիալ ռոմանտիկային եկավ վերջ:

5. Հեքիաթական նժույգ Պեգասը

Մի գիշեր անձրև եկավ: Ես արթնացա դրա շրմփոցից մեր տափակ կտուրի վրա, արթնացա տխուր, ընկճված: Ըստ երևույթին, ես քնած ժամանակ երկար լսել էի դրա միօրինակ, վիատ հնչյունները:

Անցյալում նույնպես պատահում էր, որ անձրևն արթնացնում էր ինձ: Բայց ունկնդրելով այն, ես ինձ զգում էի ապահովության մեջ: Չէ՞ որ մեր քաղաքը, ինչպես ինձ էր թվում, մեծ և բարեկարգ, անձրևի տակ կանգնած էր ինքնավստահ ու հանգիստ: Փողոցներում, էլեկտրական լամպերի հսկայական կաթնագույն լուսամփոփների վրայով, հոսում էր անձրևաջուրը և թվում էր, թե դա ոչ թե ջուր է, այլ լույսն է հոսում դրանցից: Լամպերի ուժեղ լույսի տակ անձրևը գալիս էր տեսանելիորեն, նման փայլուն ուլունքների, որ հագցրել են կախված սև թելերի վրա, իսկ թելերն ինչ-որ մեկը ցնցում և ցնցում է անընդհատ:

Փողոցների լայն մայթերով, արագ քայլերով, անցնում էին տղամարդիկ ու կանայք՝ փայլուն սև անձրևանոցներ ու թիկնոցներ հագած, կնգուղները գլխներին: Յուրաքանչյուր քայլափոխի վրա կանգնած էին էլեկտրական լույսերի մեջ լողացող շքեղ ռեստորաններ, զվարճատեղեր, ուր, փախչելով անձրևից ու ծիծաղելով, մտնում էին մարդիկ՝ զույգ-զույգ կամ խմբերով: Սմբակները դոփելով, անցնում էին կառքերին լծված ձիերը: Նրանց սմբակները շարժվում էին անձրևի շիթերի մեջ, որոնք փայլում էին ասֆալտի վրա, ինչպես արծաթագույն ցածլիկ խոտ: Ձիերի հարթ մաշկն ու կառքերի բաց արված ծածկերը լվացվել էին փոշուց ու փայլում էին անձրևի և լույսի տակ՝ իրենք սև, բայց անձրևի սպիտակ փշերով ծածկված:

Ի՞նչ էր դա… Վերհառնի մի պոե՞մը… Զոլայի մի վե՞պը... Թե՞ դա կինոնկար էր՝ Մոսկվայի մասին…

Ոչ, դա մեր փոքրիկ, անհյուրընկալ քաղաքն էր՝ իմ երևակայությամբ կերպարանափոխված, իմ երազանքներով ներթափանցված: Բայց ահա սլացավ նրա միջով ավտոմոբիլը, և այդ ամենը չքացավ…

Անձրևը գալիս էր մեր փոքրիկ, մութ քաղաքի վրա, որի միհարկանի տները թրջվել էին տակետակ: Սալահատակների հողն իսկույն վերածվում էր ցեխի: Փողոցների նավթի լամպերից շատերը հանգչում էին ջրից: Հրապարակում և կենտրոնական մի քանի փողոցներում, լիակատար անմարդության մեջ, անպատսպար թարթում էին էլեկտրական հատուկենտ լապտերների կարմրավուն թույլ կետերը՝ թանձր մթությամբ շրջապատված: Միակ ճաշարանը կենտրոնական փողոցում փակվում էր դեռ վաղ երեկոյից, իսկ միակ կինոթատրոնը փակվում էր դրանից Է՛լ ավելի վաղ…

Ահա այս էր իրականությունը…

Հանկարծ ես լսեցի սենյակում մի կամացուկ թխկոց: Թե՞ դա ինձ թվաց.. . Ոչ, նորից: Հետաքրքիր է, ի՞նչ բան է դա…

Ես սկսեցի ականջ դնել:

Այո… Չկար, իհարկե, ոչ մի հետաքրքիր բան: Դա սկսում էր կաթել մեր կտուրը…

Ես վեր կացա անկողնից, կաթիլքի տակ դրեցի թիթեղյա մի տուփ և նորից պառկեցի: Միօրինակ, հավասար ընդմիջումներով, կաթում էր անձրևաջուրը՝ առաջացնելով այնպիսի հնչյուն, կարծես ինչ-որ մեկը մատով թխկացնում էր թիթեղյա դատարկ տուփին: Բայց հետո, երբ տուփի մեջ ջուր հավաքվեց, ընկնող կաթիլների չոր հնչյունը դարձավ ջրալի: Զզվելի հնչյուն: Ես այնպես էի զգում, կարծես ոտքս ընկել էր ջրափոսի մեջ կամ ես նստել էի թաց աթոռի վրա: Անկողնում պառկած, ես մտովին շրջում էի մեր փոքրիկ բնակարանով, իսկ հետո նաև ամբողջ քաղաքով, փնտրում էի հուսալի չոր տեղ և չէի գտնում: Անձրևը թափանցում էր ամեն տեղ և թրջում էր ամեն ինչ.. . Իմ հագուստը թրջվել էր տակետակ: Կոշիկներս լի էին ցեխաջրով, որը չրմփում էր ամեն քայլափոխին: Ես սայթաքում էի ջրափոսերի մեջ կամ ոտքս դիպցնում մայթերի անհավասար քարերին:

Եվ հանկարծ, գուցե ես արդեն քնել էի և երազ էի տեսնում, արագ քայլերով ինձ ընդառաջ եկավ Գոհարիկը: Նա մոտեցավ, լայն շարժումով փռեց իմ գլխի վրա մի մեծ լրագիր և ինքը նույնպես մտավ դրա տակ: Գոհարիկի դեմքի վրա, ինչպես պեպեններ, արտացոլվել էին ինչ-որ լույսի պուտեր: Ես նայեցի վերև: Մեր գլխավերևում փայլում էին ինչ-որ թույլ կետեր: Աստղե՞ր: Ոչ, դա՝ ֆոսֆորային փայլով փայլում էին լրագրի տառերը: Ես սկսեցի ջոկել դրանք և կարդացի. դեպի կայարան տանող մեր փողոցի վրա, քանդված խանութի և հարևան տնակների փոխարեն, կանգնել է երեքհարկանի բնակելի շենքը…

Ինչպիսի՜ ուրախություն…

— Գնանք նայելու, Գոհարիկ…

Ես բռնեցի նրա ձեռքը, և մենք արագ քայլեցինք: Թեքվելով դեպի մեր փողոցը, մենք դեռ հեռվից տեսանք լույսերի մեջ լողացող շենքը… Մենք արագացրինք մեր քայլերը: Մենք սկսեցինք վազել.. .

Ահա և շենքը: Մենք ներխուժեցինք այնտեղ: Վազելով մոզաիկ սանդուղքներով, բարձրացանք երրորդ հարկ՝ շնչելով պատերի և ճաղերի թարմ ներկի հոտը:

Մենք մտանք բնակարաններից մեկը:

— Դուրս գանք պատշգամբ,— շտապեցրեց ընկերուհիս:

— Ինչպե՞ս թե պատշգամբ,— ծիծաղեցի ես:— Չէ՞ որ մեր քաղաքը միհարկանի է և չկա այնտեղ ոչ մի պատշգամբ.. . Ախ, իսկապես, չէ՞ որ մենք նոր շենքումն ենք, երեք հարկանի շենքում.. .

Մենք դուրս ելանք պատշգամբ և իսկույն էլ ետ ընկրկեցինք հրաշալի և հեքիաթային անսպասելիությունից.. .

Մեր առջև և մեր ոտքերի տակ, ցածր, շատ ցածր, տարածված էր մեր անափ քաղաքը՝ միլիոնավոր լամպերի զանազանակերպ կրակներով: Մենք մեր քաղաքին նայում էինք տասը-քսան հարկ բարձրությունից: Ուղղակի մինչև հորիզոն, զանազան ուղղություններով, ձգվում էին փողոցային լամպերի կարճ ու երկար կետաշարերը, երկինք էին խոյանում լույսի կետերից բաղկացած աշտարակներ, ներքևում, ինչ-որ տեղ, երևում էին համատարած լույսի լճակներ, ինչպես հալված մետաղով լի կաթսաներ: Հեռու հրապարակների ու փողոցների վերևում, որ պատնեշված էին մեզանից ինչ-որ բարձր պատերի մութ ուրվանկարներով, երկնքում փռված էր լուսափոշի, որը վկայում էր քաղաքի կենտրոնների ներկայությունը դրա ներքո:

Իմ կողքին ես հանկարծ լսեցի իմ ընկերուհու հիացած, կամացուկ բացականչությունը.

— Նայի՛ր, նայի՛ր.. .

Նա ցույց էր տալիս ուղիղ մեր ոտքերի տակը, պատշգամբի տակը:

Ես իմ հայացքը կտրեցի քաղաքի ընդհանուր պատկերից և նայեցի այնտեղ: Վայրկենապես իմ գլուխը պտտվեց և սիրտս նվաղեց.. .

Ես ու Գոհարիկը կախվել էինք ուղղակի փողոցի վրա, որն ըստ երևույթին, կենտրոնական փողոցներից մեկն էր: Կրակներով փայլող դիք պատերը մեր տակ և մեր առջև իջնում էին ներքև, շատ ներքև և վերջանում էին առաջին հարկերի ցուցափեղկերի համատարած լույսով: Մարդկային հոսանքները հոսում էին մայթերով՝ երկու ուղղություններով, հանգիստ, իրիկնավարի՝ պարապաքայլ: Իսկ փողոցի մեջտեղով, մի ուրիշ, ավելի արագ տեմպով, ետ ու առաջ էին սլանում ավտոմոբիլները, տրամվայները.. . Չկար, իհարկե, ոչ մի անձրև:

Մի՞թե դա երազ է... Մի՞թե ես հիմա կարթնանամ և կզրկվեմ այդ ամենից.. .

Ո՛չ, դա երազ չէր: Դա պրովինցիալ քաղաքի բնակչիս երազանքն էր, բայց գուցե և դեռ չսկսնակ գրողիս գիտաբանաստեղծական կանխատեսությունը.. .

Ես այնպես հավատացի իմ պատրանքին, որ վեր ցատկեցի անկողնից, արագ նետեցի վրաս ինչ-որ հագուստ դուրս ելա բակ, իսկ այնտեղից՝ փողոց.. .

Ո՛չ.. . Առաջվա թափով գալիս էր անձրևը: Նա սթափեցրեց ինձ, և ես տեսա. անձրևը գալիս էր մեր միհարկանի և հարմարազուրկ փոքրիկ քաղաքի վրա.. . Օ՜հ, այն էլ ինչպիսի՜ հարմարազուրկ.. .

Իսկ այն շենքը, որը կառուցվում էր իմ ու Գոհարիկի փողոցի վրա, դեռ ավարտված չէր. մենք այդ գիտեինք: Մենք այրվում էինք հետաքրքրությունից, թե ինչպես էր նա կառուցվում, արդեն քանի հարկ կար այնտեղ: Բայց մենք զսպում էինք մեզ՝ այնտեղ գնալու և նայելու համար, որպեսզի հետո, երբ այն լիովին ավարտվի, տեսնենք միանգամից.. .

Անձրևը, որ սառնացել էր ամպերի ետևից պղտոր թափանցող լուսնի լույսից, իսկույն թրջեց ինձ, և ես շտապեցի վերադառնալ տուն:

***

Նշանավոր օրվա երեկոյան ես գնացի Գոհարիկի մոտ, նա շտապ հագնվեց, և մենք դուրս ելանք:

Ինչպե՜ս էինք մենք շտապում, ինչպե՜ս էինք սլանում: Մթության մեջ սայթաքելով յուրաքանչյուր քայլափոխին, մենք ձգտում էինք որպե առաջ հասնել տեղ:

Մեր դիմացից գալիս էին մարդիկ՝ դանդաղ քայլերով, իրենց հետաքրքրությունն արդեն բավարարած: Կարծիքներ փոխանակելով, նրանք վերադառնում էին տուն: Իրիկնային մութ փողոցը նրանք դարձնում էին տոնական:

Ամբողջ քաղաքն առավոտից երեկո գնում էր դիտելու նոր շենքը: Դա տոնախմբություն էր:

Խորհրդային երկրի այսօրվա բնակիչներ, հատկապես դուք, որ ծնվել եք ինձանից հետո: Դուք, իմ երիտասարդության հասակակիցներ: Մի ծիծաղեք ինձ և իմ համաքաղաքացիների վրա այն բանի

համար, որ միակ շենքի կառուցումը մենք համարում էինք մեծ դեպք մեր կյանքում: Այո, ձեզ երջանիկ բաժին է ընկել քայլելու մեր քաղաքների և գյուղերի նոր փողոցներով ու թաղամասերով, էլի կառուցվող բազմաթիվ տների ու շենքերի մոտով: Բայց ինձ ևս, ինձ ևս ընկել էր ոչ պակաս երջանիկ բաժին՝ տեսնել խորհրդային իշխանության ժամանակ մեր քաղաքում կառուցված առաջին շենքը:

Նա կանգնած է դեռ մինչև այսօր, ոչ ավելի վատը, քան հետագայում կառուցվածները: Կամ գուցե մի փոքր ավելի վատը, բայց մի՞թե դա կարևոր է: Դուք կանցնեք նրա մոտով և չեք նկատի նրա մեջ առանձնապես ոչինչ, իսկ ես ահա անցնում են յուրաքանչյուր անգամ հուզմունքով, որովհետև գիտեմ, որ դա առաջինն էր, որ մեր ամբողջ նոր քաղաքն սկսվեց դրանից.. .

Մենք այն տեսանք դեռ հեռվից: Միհարկանի տների տափակ կտուրներից վեր, գետնահուպ մեր փոքրիկ քաղաքից վեր, խոյացել էր բազմահարկ շենքի զորեղ կորպուսը.. . Դրա բոլոր հարկերը շողում էին էլեկտրական կրակներից, բոլոր լուսամուտներում լույս էր վառվում: Բնակիչները տոնում էին իրենց նոր բնակությունը:

Մենք քայլեցինք ավելի արագ, անթարթ նայելով շենքին: Եվ հանկարծ մենք նկատեցինք, որ նա աստիճանաբար խորասուզվում է ինչ-որ տեղ և անհետանում է աչքից: Ի՞նչ բան է: Նորի՞ց երազ: Ո՛չ, պարզապես մենք իջանք առաջին փոսը:

Երբ մենք նորից բարձրացանք վերև, շենքն արդեն կանգնած էր համարյա երկու քայլի վրա: Այժմ այն երևում էր ամբողջովին:

— Նայի՛ր, նայի՛ր.. .

Ո՛չ, այլևս անհնար էր քայլել: Մենք վազեցինք: Փողոցը մեր առջև կտրուկ սահմանագծված էր մթության և լույսի: Մենք մտանք լույսի մեջ, բարձրացանք դիմացի մայթը և հիացած, սքանչացած, նայեցինք շենքին: Մեկ, երկու, երեք.. . հինգ հարկ.. .

Ամբողջ առաջին հարկը բաղկացած էր առատ և բազմազան լուսավորված խանութներից: Տասներկու ցուցափեղկ՝ մեր փողոցի վրա և վեցը՝ հատող փողոցի: Ապակիները հսկայական են և անչափ թափանցիկ: Ցուցափեղկերում ցուցադրված են առատությունն ու շքեղությունը: Ինչպիսի՜ ապրանքներ: Քմահաճ ձևեր ունեցող ապակյա, հայելիավոր, նիկելապատած պատվանդանների վրա դրված, վառ լույսի տակ, դրանք թվում են աներևակայելիորեն գեղեցիկ: Մեր փողոցի վրա ութ ցուցափեղկեր պատկանում են երեք խանութների՝ հրուշակեղենի, գալանտերիայի և գրքերի: Մնացյալ չորս ցուցափեղկերը ծածկված են կրեմագույն մետաքսե վարագույրներով: Այնտեղ ռեստորան է: Հնչում է երաժշտությունը, լսվում են սեղանի պարագաների զնգոցներ:

Առաջին հարկի ցուցափեղկերի վերևում, չորս շարք իրարից բարձր, լուսամուտներ են, պատշգամբներ, և պատշգամբներում՝ դռներ: Կարծես ինչ-որ զորեղ վերամբարձ մեքենա պոկել է գետնից մարդկանց բնակարանները և դրել է միհարկանի քաղաքի վերևում: Մութ երկինքը, որը մինչև այդ գտնվում էր այնքան ցածր, համարյա շփվում էր գետնին, այժմ շպրտված է շատ բարձր: Դրա տեղը գրավել են էլեկտրականությամբ լուսավորված հարկերը:

Ի՜նչ համաչափորեն միանման են լուսամուտները և ի՜նչ բազմազան են: Որոշ լուսամուտներ փայլում են բազմալամպ ջահերի պայծառ, համարյա սպիտակ լույսով, մյուսները՝ սեղանի լամպերի մեղմ կանաչ լույսով, էլի մյուսները՝ ննջարանների գիշերաճրագների վարդագույն և երկնագույն լույսերով:

Մենք տեսնում ենք սենյակների սպիտակ առաստաղները՝ զարդաքանդակ քիվերով, իսկ կենտրոնում՝ մեծ զարդաշրջանակով՝ ջահի համար:

Մենք տեսնում ենք ոսկենախշ պաստառներ չորրորդ հարկի սենյակներից մեկի պատերի վրա:

Մենք տեսնում ենք, թե ինչպես երրորդ հարկի մի այլ սենյակում պատերը ծածկված են մուգ կարմիր գորգերի փափուկ ջերմությամբ: Գորգերի վրա կախված են դիմանկարներ:

Մի լուսամուտից ներքև են նայում տղամարդ և կին: Ամուսինը փողկապով է և հարթ սանրված, իսկ կինը՝ լայն թևքեր ունեցող խալաթով:

Մի այլ լուսամուտից դուրս են լողում դաշնամուրի անմարմին հնչյունները:

Մեջքը պատշգամբներից մեկի ճաղերին հենած, մի տղամարդ զրուցում է սենյակում գտնվող մի ուրիշի հետ: Բաց դռնից պատշգամբ է թափանցում բնակարանի հանգստավետությունը:

Մի այլ պատշգամբում դրված է փոքրիկ թեյասեղան, որի շուրջը նստոտել են մի քանի տղամարդ և կին:

Մի երրորդ պատշգամբից զարմացած նայում են ներքև երկու երեխաներ, մեկը՝ ճաղերից ցածր, իսկ մյուսը՝ մի քիչ բարձր:

Չորրորդ պատշգամբում, ոտքը ոտքի վրա գցած, աթոռի վրա նստել է ռազմական կեցվածք ունեցող մի տարիքոտ մարդ և ծխում է:

Այսօր այդ շենքի գոյության առաջին օրն է, բայց նա արդեն նման է վաղուց բնակեցվածի:

Իսկ ներքևում, փողոցում, անդադար բացվում ու ծածկվում են խանութների դռները, որոնք ծանր են տեսքով, բայց թեթև են շարժվում: Ելումուտ են անում գնորդները և պարզապես հետաքրքրվողները:

Ես ու Գոհարիկը նույնպես, արդեն եղել ենք այդ խանութներում, մենք մտել ենք նաև միջանցքները, բարձրացել ենք գեղեցիկ դատարկ սանդուղքներով, ականջ ենք դրել իրենց նոր բնակությունը տոնողների ուրախ աղմուկին, որ գալիս էր դռների ետևից: Իսկ այժմ մենք գնում ենք շենքը դիտելու հատող փողոցի կողմից:

Մայթը շենքի առջև ծածկված է հարթ ու խոշոր սալաքարերով և կրկնակի լայն է հին մայթից: Կոր անկյունով նա շրջվում է դեպի հատող փողոցը: Շենքի անկյունը նույնպես սուր չէ, այլ կորացված: Սուր անկյունը դանակի պես կանջատեր նեղ ու փոքր փողոցը մեր լայն փողոցից, իսկ այդպիսի անկյունը միացնում է դրանք և աննկատելիորեն մի փողոցը փոխարկում է մյուսին:

Բայց դա խաբուսիկ բան չէ, դա չի արված խուլ և անմարդ հատող փողոցի դատարկ մխիթարության համար: Այդ փողոցը բավական տարածության վրա լուսավորված է երկու խանութների՝ կտորեղենի և ամանեղենի, վեց ցուցափեղկերով: Իսկ խանութների վրա՝ բնակելի տների նույն չորս հարկերն են:

Կուտակված լույսերի անդրադարձումները թափանցում են փողոցի խորքը, կարծես աշխատելով արթնացնել արդեն քնած այդ փողոցը: Լույսի ետևից գնում ենք դեպի խորքը նաև մենք, ապա ետ ենք շրջվում ու նայում: Եվ այդտեղ մենք նկատում ենք այդ բազմահարկ շենքի ամենագեղեցիկ բանը՝ դրա ծայրի պատը:

Թվում է, թե այն տգեղ է: Շարված է հասարակ, ոչ երեսպատման քարից, և դրա վրա չկա ոչ մի լուսամուտ: Բայց այդ պատի եզրերը վերջանում են ատամնաձև, այսինքն՝ չեն վերջանում, այլ ժամանակավորապես ընդհատվել են և սպասում են իրենց շարունակությանը: Շենքը պետք է շարունակվի այդ կողմից՝ խուլ ու փոքրիկ փողոցի կողմից.. .

Ծայրի պատի վրա, մեջտեղում, մեկը մյուսից բարձր, կան հինգ դռներ: Դրանք նայում են դեպի գիշերային մթության դատարկ տարածությունը: Դրանք բացվում են դեպի այն սենյակները, որոնք դեռ չկան: Քարը, բետոնը, ապակին և էլեկտրականությունը դեռ ետ չեն հրել մթությունն ու դատարկությունը, որոնք ընդհուպ մոտեցել են այդ ծայրի պատին:

Գեղեցիկ պատ է: Մութն է, բայց ունի լուսավոր ապագա:

Պատն ի՞նչ: Ամբողջ շենքն է կանգնած որպես մի իսկական, խոշոր քաղաքի բեկոր, որն ընկել է մեր միհարկանի, կիսախավար, փոքրիկ քաղաքը: Գուցե դա եկել է ապագայի՞ց, դրա կարապետն է և մունետի՞կը.. . Դրա սկի՞զբն է...

Եվ իրոք: Երբ մենք, կանգ առնելով փողոցների անկյունում, մեծ շենքի առջև, ձեռքներս պատնեշի պես դրեցինք մեր երեսներին և այդպիսով անջատեցինք լուսավոր մեծ շենքը մութ փողոցներից, մեզ այնպես թվաց, թե նա մենակ չէ, թե մեր ձեռքերից այն կողմ շարք են կանգնած նաև ուրիշ այդպիսի շենքեր, որ բոլոր փողոցներն են մեծ, ամբողջ քաղաքն է բազմահարկ.. .

Այո, այդ շենքը կառուցված էր շարունակելու, բազմացնելու հաշվով, ապագայի հաշվով.. . Միայն կույրը, նայելով այդ վիթխարուն և դրա կողքի միհարկանի տնակին, որը ցածր էր նրա առաջին հարկից, կարող էր չտեսնել, որ այդ շենքը եկել էր քերելու գետնի վրայից խղճուկ պրովինցիան.. .

Մենք նայում էինք նրան առանց կտրվելու, աչքներս ցավեցնելու աստիճան: Ամենից ավելի դուր էր գալիս ինձ, իհարկե, նաև Գոհարիկին, շենքի կոպիտ առնականությունը: Առաջին հարկը շարված էր կիսատաշ գորշ գրանիտից, իսկ վերին չորս հարկերը՝ վարդագույն տուֆից: Պատշգամբները երկաթբետոնից էին, կտուրը՝ թիթեղյա:

Ոչ, առաջին եկվորի անհամարձակ քայլերով չէր մտել նա մեր քաղաքը: Ծանրակշիռ փղի նման էր նա կանգնել մեր փողոցի վրա: Դե թող գան այժմ բոլոր անձրևները, ձյունն ու կարկուտը, թող փչեն բոլոր քամիները, խփի կայծակը, ցնցի երկրաշարժը.. . Էլ ի՞նչ տարերքներ կան, համեցեք այստեղ՝ եթե ուզում եք: Նրան սարսափելի չէ ոչինչ:

Ինձ և Գոհարիկի համար ևս ոչինչ սարսափելի չէ նրա զորեղ պատերի, լույսի առատության, ռեստորանի երաժշտության, խանութների աղմուկի, հարկերի բազմամարդության հովանավորության տակ: Մեզ համար այնքան հաճելի է կանգնել նրա մոտ, քսվել նրա բարձր ու լայն պատերին, մեր ոտքերի տակ զգալ մայթի հարթ ամրությունը.. . Եվ այնքան տհաճ է՝ նրա պատերի տակից նայել ամայի ու մութ փողոցին՝ իր միհարկանի, քնած տնակներով: Հավատալ չի լինում, որ դեռ երեկ ամբողջ քաղաքն էր այդպիսին, այնտեղ չկար լույսերով ողողված և արթուն այդ հինգհարկանի վիթխարին:

Արժե աշխատել զօր ու գիշեր, Գոհարիկ, արժե աշխատել քրտնաթաթախ, առանց խնայելու մեզ, հանուն այդ շենքը շարունակելուն, հանուն ուրիշ այդպիսիներ ստեղծելուն, հանուն մեծ քաղաքի, որը մեզանից ծածկված է մոտիկ ապագայի կապույտ մշուշով: Բայց ոչ թե նա է գալու դեպի մեզ, հարկավոր է, որ մենք ինքներս գնանք դեպի նա, ճանապարհը բաց անենք աշխատանքով:

Աշխատել, աշխատել, աշխատել.. .

Թո՛ւ, գրողը տանի: Չէ՞ որ մեզ առայժմ հարկավոր է սովորել, սովորել, սովորել.. .

Ի՞նչ արած.. .

Իսկ շենքը կանգնել է և մնալու է կանգուն: Մենք նայում ենք նրան էլի մի անգամ, էլի, էլի, և չենք կարողանում կտրվել, որ գնանք, վերջապես տուն:

* * *

Ինչպես հեքիաթական թևավոր ձի Պեգաս, շենքն ինձ ու Գոհարիկին թռցրեց տարավ դեպի չքնաղ հեքիաթը՝ ապագայի իրականությունը: Մենք այնտեղ եղանք մի քիչ ժամանակ, բոլորովին քիչ ժամանակ, բայց դա էլ բավական էր, որ ոտից գլուխ ներծծվեինք ապագայով:

Եվ ահա, մենք նորից վերադարձանք մեր փոքրիկ քաղաքը և ապշած նայում ենք նրան: Մենք տրորում ենք մեր աչքերը, չենք հավատում նրանց, կարծես մեր քաղաքը չէ իրականությունը և ապագան չէր տեսիլը, այլ, ընդհակառակը, իրականությունն ապագան է, որտեղ մենք ապրում ենք վաղուց, իսկ մեր փոքրիկ քաղաքն անցյալի ուրվականն է, որը հանկարծակի կանգնել է մեր աչքերի առջև:

Երանի շուտ հասնեինք այնտեղ՝ ապագային. . .

1935, 1954